

ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՅԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ



ՄԱՐՏ — 1901

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ ԺԳ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

	Էջ
1 . Հայրապետական Կոնդակֆ . —	
Առ Մանչեսթրի Աշգաշինս .	65
Առ Ընդհանուր Ժողովուրդ Հայոց .	67
2 . Կեանք Յիսուսի . Մասն Գ	77
3 . Բարոզ Տեսուչներդառաջի .	83
4 . Թղթակցութիւն . —	
Նախակ Սարնսէն .	89
5 . Առակ Անիրաւ Տնեստիւն .	90
6 . Առակ Անիրաւ Դասարոհիւն .	96

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն
սեղի համար սարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանկ,
վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Ֆրանկ թղթասարաւ .
Տանկասանի քաղաքաց մէջ ձեռքէ կը ծախուի
հասը՝ Երկու (2) Դանեկանի .

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան
վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել
առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ


ԹԻԻ 13

ԵՐԿՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1901



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ



ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆ-

հասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ
Կաթողիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազ-
գական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական
Մայր Եկեղեցւոյ Սբբոյ Կաթողիկէ Էջմիածնի. Մանչես-
թերի պատուական եւ սիրելի համայն ազգայնոց մերոց
ողջոյն եւ օրհնութիւն նուիրելով աղօթէ վասն Ձեր հայոց
վշտակէր Հայրիկ, առ ի կալ եւ մնալ Ձեզ ըստ Պօղոսի
բանին զգաստութեամբ եւ արդարութեամբ եւ աստուած-
պաշտութեամբ կենցաղավարել յաշխարհիս այս: Չգաս-
տութեամբ առ անձն, արդարութեամբ առ ընկերս եւ աստ-
ուածապաշտութեամբ առ կրօն եւ եկեղեցին: Որով ակն

ունիցիք դուք երանելի յուսոյն, որ է երկնից ժառանգութիւն, զոր պատրաստեալ է Աստուած սիրելիաց իւրոց :

Անշուշտ լսած էք եւ լրագրեր հրատարակեցին անցեալ տարի, թէ Ս. Էջմիածնայ Մայր Աթոռ մտադրութիւն ունի մի պարտաւորութիւն կատարել, որ ի վաղուց անսփ ծանրացած է իւր վերայ, այսինքն այն դարէն, երբ տպագրութեան գիւտ աշխարհ եկած է :

Առ այս ես մի շրջաբերական կոնզակ հրատարակելով հրաւէր եւ կոչումն արի համայն ազգին, որ օժանդակութիւն ընծային այս ձեռնարկութեան համար : Վասն զի Մայր Աթոռ չկարէ ինքնին հոգալ սուրբ Գրոց տպագրութեան ծախս, ունելով բազմադիմի ծախս Էջմիածնայ վանուց ընդհանուր կառավարութեան, մանաւանդ ձեռնարանի ծախուց համար, որ հասնում է մինչեւ քառասուն եւ հինգ հազար ըուրբի. ծխական դպրոցներ հայոց ձեռքէն առնուելով ձեռնարանի վիճակ ծանրացաւ, այսօր երկու հարիւր երեսուն աշակերտ գիշերօթիկ ունի :


Իմ կոնզակի մէջ Աստուածաշունչի տպագրութեան մասին երկարօրէն բացատրուած են . ես աւելորդ եմ համարում յորդոր կարգալ Մանչէսթրի սղնիւ եւ պարտաճանաչ ազգայնոց . որք ինքնայորդոր եղած են միշտ չմոռնալ երբէք իրենց պարտիքներ առ ազգայինս, աւելի եւս այս դառնաբեր ժամանակիս :

Օրհնելով զՁեզ, զի դուք միշտ կարող լինիջիք բարիս գործել առանց ձանձրանալու, ըստ Առաքելոյ բանին :

Վասն յաջողութեան եւ բարեբաստիկ կենաց Ձերոց,
Աղօթարար

ՄԿՐՏԻՉ ԿՍԹԵՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թ . 203 . Ի Յ փետրուարի 1901ամի ըստ տոմարիս ՈՅՄ
Ի Հայրապետութեան Մերում Ե. ամի Ի Ք. Թիֆլիս :





Մ ԿՐՏԻՉ ԵՌԱՐՀ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՒ

ՍԻ, Հայրապետ եւ Հովիւ Ընդհանուր Հայ. Սուրբ եւ Առաքելական Եկեղեցւոյ Հաւատացեալ Հօտին Քրիստոսի եւ Անարժան Սպասաւոր Տանն Աստուծոյ Կաթուղիկէ Սուրբ Էջմիածնի, Նախակարգեալ Մայր Աթոռոյ Սուրբ Գրիգորի Հօրն Մերոյ Լուսաւորչին՝ Առ ամենայն Եկեղեցիս Հայոց եւ համայն ուխտ Եկեղեցւոյ. Գերապատիւ Թեմակալ Առաջնորդաց, Բանին կենաց ուսուցիչ եւ քարոզիչ վարդապետաց, մատակարար Եկեղեցւոյ սուրբ խորհրդոց պատուական Քահանայից եւ առ համայն դասակարգութիւն ժողովրդականաց Հայոց, յօղեալք ամենեքին ի մի գլուխն Քրիստոս. որոցդ առհասարակ ընծայելով զքրիստոնէական ուղոյն, աղօթս առնեմ վասն ձեր եւ դուք վասն իմ առնիջիք առ ի կալ մնալ մեզ ըստ Պօղոսի յորդորանաց, զի «Ձգաստութեամբ եւ արդարութեամբ եւ աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի»։ Լի յուսով եւ հաւատով ակն կալեալ հանդերձեալ փառաց եւ երկնից արքայութեան, զոր խոստացեալ է Տէրն մեր Յիսուս Քրիստոս ամենայն պատուիրանապահ սիրելեաց իւրոց։

«Ոչ ոք լուցանէ զճրագ եւ զնէ ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի զնիցի, որ լոյս տայ ամենեցուն որ ի տան իցեն» ասաց Աստուածորդին Յիսուս. այն որ լուսոյ հօրէն իջաւ մեր աշխարհը, վառեց Աւետարանին լուսատու ճրագ եւ գրաւ զայն Միօնի բարձանց աշտանակին վերայ, որ լոյս տայ՝ ոչ միայն Իսրայէլի տան, այլ համայն տիեզերական աշխարհիս տան. սորա համար ասաց՝ «Ես լոյս յաշխարհ եկի»։ Այս լոյսն էր, որ ծաւալեցաւ տարածեցաւ ի բաց փարատեց մեր կռամոլութեան խաւարը։ Ժողովուրդ, որ մահուան ստուերին եւ խաւարին տակ նստած էր, լո՛յս, լո՛յս կաղաղակէր՝ տեսաւ Աստուածգիտութեան մշտնջենաւոր լոյսն, որ այլ եւս չի ծածկիր, այլ պիտի լուսաւորէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ։

Մարդոյն փրկութեան համար հոգացող Տէր Աստուած,

այդ խորհրդաւոր աշխարհալոյս ճրագը երկու անգամ վառեց, մի անգամ Մովսէսին ձեռքով վառեց Իսրայէլի տան համար . հին օրինաց եւ հին ուխտի ճրագն էր այն , որ միայն Յակովբայ փոքրիկ տուն կը լուսաւորէր : Իսկ երկրորդ անգամ վառեց մեր Փրկիչ Յիսուսին ձեռքով , որ սահմանուած էր իւր Աւետարանին լուսով լուսաւորել բովանդակ աշխարհի տուն , յորում նստած կային անլոյս անաստուած հոգիներ եւ շօշափելի խաւարին մէջ կաշկանդուած կը խարխափէին : Իսկ այսօր Աւետարանին լուսով լուսաւորուած մոլիկրօն խաւարին որդիքներ՝ դարձան Աւետարանի լուսոյ որդիքներ :

Եւ ի՞նչ է այդ մշտալոյս համասփիւռ լուսատու ճրագ : Ամենայն Քրիստոնեայ հաւատացեալ , որ լուսաւորուած է այդ ճրագին լուսով՝ չէ կարող չխոստովանիլ , թէ այդ կրկնակի ճրագ Մովսիսին եւ Յիսուսին ձեռքով վառուած Աստուածաշունչ Սուրբ Գիրքն է , Հին եւ Նոր Կտակարանն է , եւ այդ Աստուածախօս մատենին մէջ միայն բովանդակուած է մեր փրկութեան ուղիղ ճանապարհ դէպ ի երկնից արքայութիւն : Սուրբ Գիրք տրուած է Քրիստոսի հաւատացեալ ժողովուրդին ա՛յն նպատակաւ . ինչպէս ճշտութեամբ բացատրում է երանելին Պօղոս , «Ամենայն գիրք Աստուածաշունչք եւ օգտակարք ի վարդապետութիւն են եւ ի յանդիմանութիւն եւ յուղղութիւն եւ ի խրատ արդարութեան . զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ յամենայն գործս բարութեան հաստատեալ» :

Սուրբ Գիրք Աստուծոյ բանն է , որով միայն կարող է Քրիստոնեայն իբրեւ ճշմարիտ Քրիստոնեայ ապրիլ աշխարհիս վերայ , որպէս ասաց Քրիստոս՝ «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ , այլ եւ ամենայն բանիւ , որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ» : Քրիստոս իսկապէս Հօր Աստուծոյ բերանն էր եւ լիզու , ինչպէս ի դիմաց Քրիստոսի գուշակեց Դաւիթ . «Լեզու իմ որպէս գրիչ արագագիր դպրի , գեղեցիկ տեսլեամբ քան զամենայն որդիս մարդկան» :

Եթէ մարդ բանաւոր ու հոգեւոր , եւ որ Աստուածանմանութեան պատկեր է կրում եւ որ ստորին արարածոց վերայ իշխան կարգուած է , սոսկ հացով միայն ապրի , այլ եւս ի՞նչ զանազանութիւն կը լինի նորա եւ անասնոց մէջ , որ խոտով միայն կապրին . մարդոյն այս անասնական կեանքը՝ Դաւիթ նկատեց եւ ասաց . «Մարդ՝ ի պատուի էր եւ ոչ իմացաւ , հաւասարեցաւ անասնոց անբանից եւ

նմանեցաւ նոցա » :

Աւա՛ղ մարդոյն , որ Գրիստոնեայ անուն է կրում , եւ որ կեղծանէ Աստուածեղէն հոգւոյն պատկերը եւ սոսկ մարմին կը դառնայ եւ չունի նա ոչ յոյս ոչ հաւատ զէպի յաւիտեանական կեանք . նորա վախճան մինչեւ ի գերեզման կը հասնի եւ այնուհետեւ՝ ոչինչ :

Աւետարան Երուսաղէմի Սիօնի շէնքան վերայ բղխած կենդանի եւ կենդանարար ջուրն է , որ սկզբէն մի փոքրիկ աւազան էր , յետոյ մեծացաւ , ծաւալեցաւ , ծով դարձաւ , պատեց բոլոր աշխարհ : Եւ ո՛վ գործեց այդ զարմանալի հրաշք , Գալիլիացի տգէտ ձկնորսներ , որ զօրացան չնորհապարգեւ Սուրբ Հոգւով , իբրեւ զրախտի գետեր յորդելով բովանդակ չորս կողմ աշխարհիս ոռոգեցին Աւետարանի կենաց ջրով : Այս հրաշալի գետերուն համար վայելչապէս երգում է Շարականի երգահան . «Այսօր բղխեաց ջուր կենդանի յԵրուսաղէմ , յորմէ լցան գետք Աստուածային եւ ընթացեալք արբուցին տիեզերաց զքառավտակ աղբիւրս իմաստից . Գետոցս այս գնացիւք ցնծայ քաղաքն Աստուծոյ Սիօն Մայր Եկեղեցի» :

Այս Աւետարանիչ գետերէն Թաղէոսին վիճակեցաւ երթալ ոռոգել Հայոց աշխարհի ծարաւի անապատներ , որ Միջագետքէն սկսեալ մինչեւ Մեծին Հայոց Արտաղի գաւառը բաշխեց կենաց Բանին ջուր , ուր եւ ինքն նահատակեցաւ հաւատացեալ կոյս Սանդուխտին հետ , որոց արիւնով հիմնեցաւ առաջին Եկեղեցին Հայոց :

Սակայն հեթանոս կռամով Սանատրուկ եւ իւր յաջորդներ՝ հալածանք հանելով՝ աշխատեցան խսկաւ ցամաքացնել , փակել Թաղէոսին քարոզած կենաց աղբիւրին ակն :

Իսկ մարդկային փրկութեան միշտ հոգացող մեր երկնաւոր Հայր՝ Թաղէոսի ետեւէն հասոյց Պարթեւական Գրիգորիոս , մի երկրորդ առաքեալ եւ Լուսաւորիչ , որ իւր հրաշալի առաքելական խաչակրութեամբ նոյն Աւետարանի կենդանի գետով ոռոգեց զբովանդակ Հայս . Թաղէոս եւ Գրիգոր Հայոց աշխարհի մեծ ջրբաշխներն են : Այնուհետեւ սուրբ Գրիգորին յաջորդեցին մի շարք աստուածաշնորհ սքանչելի մեծագործ հայրապետներ , որք ոչ միայն կենդանի բարբառով քարոզեցին կենաց բանը , այլ եւ գրելով , թարգմանելով , մեկնելով , բացատրելով Սուրբ Գիրքը բիւրաւոր ձեռագիր օրինակներով տարածեցին Հայոց եկեղեցիները : Ո՛վ կարող է թուել Սուրբ Գրոց այնչափ

ձեռագրաց յիշատակարաններ, որոց գրիչներ Չերմնոանդ հաւատով աղերս կըմատուցանեն ընթերցող ժողովուրդին յիշել յաղօթս՝ նախ ձեռնտու բարերար մեկերնասներ եւ ապա տընող աշխատող գրիչներ. սոցա հետ չի մոռնար նաեւ մագաղաթ պատրաստող եւ ծաղկէնկար աշխատաւորներն: Ես կըթողում աստ յիշատակել այնչափ բազմօրինակ վարդապետական խրատական ճառքնտիրներ, մարտիրոս նահատակաց պատմութիւններ, որ Յայսմաւուրք կը կոչուի, այլ եւ այլ պատմական հեղինակներ եւ այլն: Չհամարիմ ես ամօթ խոստովանիլ, որ նախնեաց անձնանուէր գրասիրութեան առաջ մեք շատ ամօթով եմք իբրեւ յոյլ եւ ծոյլ. նոքա վաստակեցին, եւ մեք մտանք նոցա վաստակին մէջ եւ կըպարծիմք եւս:

Ներկայ դարուս մէջ այլ եւս հարկ չէ մնացեր, որ ժողովուրդ ձեռագիր Աստուածաշունչ կարդայ, երբ քանի դարերէ ի վեր Կուտթէմպէրկի հրաշալի տպագրութեան գիւտ գիւրացոյց այն միջոցը, որով կարելի կըլինի քիչ ժամանակի մէջ հազարաւոր օրինակներ տպագրելով Սուրբ Գիրքը ժողովուրդին տալ:

Արդէն յիշատակաց արժանի Տէր Ոսկան վարդապետ առաջին անգամ տպագրեց Աստուածաշունչ գիրքը յՄարտերդամ Յակովբ Զուղայեցի Կաթուղիկոսի օրով. յետ նորա երիցս անգամ տպագրեց աւելի ընտրելագոյն օրինակաց վերայ Մխիթարեան վաստակաւոր ուխտ, մի անգամ եւս ի Բեթրսպուրկ տպագրուած է: Իսկ Ամերիկեան Պօրտի Աստուածաշունչի ընկերութիւն, թո՛ղ առաջին անգամ աշխարհաբառ թարգմանութեամբ հրատարակուած Սուրբ Գիրքը, վերջին անգամ եւս նոյն ընկերութիւն տպագրել տուաւ ի Պօլիս եօթանասնից թարգմանութեան օրինակին վերայ, ի բաց թողլով իբր անկանոն համարուած Սուրբ Գրոց մի քանի գրքերը:

Սոքա իւրաքանչիւր այդ աստուածահաճոյ պարտք լիովին կատարելով՝ ամենայն յարգանաց եւ երախտագիտութեան արժանի են:

Իսկ Հայոց Մայր Աթոռը աւա՛ղ, տակաւին պարտական մնացած է, իւր բաժին պարտք մինչեւ ցայսօր անվճար կըմնայ. որ քան զամէն մեծ եւ ծանրակշիռ է իւր այս պարտաւորութեան բեռը. իբրեւ Մայր ու դայիակ հոգեւոր սնունդ մատակարարելով, Հայ. Եկեղեցւոյ որդիքները լուսաւորել եւ կրթել Աստուածպաշտութեան մէջ:

Ես չեմ կարող եւ չունիմ իրաւունք մեղադրել մեր անցեալ ժամանակի նախորդներ, որոց բազմալիշտ կեանք եւ իրենց ապրած ժամանակի անյաջող հանդամանքներ թոյլ չեն տուեր այդ պարտիքը կատարելու, գուցէ նոքա աւելի քան զմեզ ունեցիր են փափագ եւ ցանկութիւն :

Բայց միթէ այժմ բարեյաջող ժամանակ է, թերեւս ոմանք դատելով զմեզ ասեն, է՛հ Հայրիկ, մի կողմէն սով պատեր է թուրքիոյ հայ ժողովուրդ, միւս կողմէն դաղթականներ ծանրացիր են Ռուսիոյ Հայոց եւ Մայր Աթոռին վերայ, սովամահ ժողովուրդ հա՛ց հա՛ց կաղաղակէ, թողով ձեր այս ամենամեծ հոգածութիւնը՝ դու ելիր ես Աստուածաշունչ կրտ պարես . լաւագոյն չէ՞ որ այդ ձեռնարկութեան ծախս սովալլուկ ժողովուրդին բաշխուի . ազատելով զանոնք վերահաս մահէն : Դորա պատասխանը՝ ես Աւետարանին կըթողում, որ երբ մեղաւոր կին այն ազնիւ թանկագին իւր թափեց Քրիստոսի Գլխոյն վերայ՝ արծաթամու աշակերտն ասաց . «Ո՛րքէ՞ր եղիւ կորուստ իւրոյդ այգմիկ, մարթ էր վաճառել զայդ այսքան դահեկանի եւ տալ աղքատաց» եւ այլն : Առ այս Յիսուսի պատասխանն յայտնի է, եւ ես կըյաւելում, թէ ճշմարիտ Քրիստոնեայն պէտք է արդարապէս բաժանարար լինի իւր կենաց մասերուն, այն է հոգւոյն եւ մարմնոյն . ինչ որ հոգւոյն բաժին է՝ պարտի հոգւոյն տալ եւ ինչ որ մարմնոյն է՝ մարմնոյն տալ . հոգւոյն բաժին Աստուծոյ բանն է, իսկ մարմնոյն բաժին հացն է, երկուքին պարզեւոզն եւս մեր երկնաւոր Հայրն է :

Գիտեմ, եւ խղճիս գիտակցութիւն կըվկայէ, թէ Հայրապետին պարտուց բաժին շատ եւ բազմապատիկ են, եւ Հայոց ժողովուրդին հաւատք չափէն աւելի կըպահանջէ, մինչեւ անգամ նա կըմոռնայ Բանին տնտեսութիւնը՝ եւ միայն հաց կըխնդրէ եւ ուրիշ ոչինչ : Եւ ո՞վ կարող է մեղադրել զինքն, տեսնելով դաղթական Հայոց տառապեալ կեանք : Այսպէս, աւելի եւս ինձ վիճակուած է հացին ու սեղանին սպասաւորութիւնը, քան Բանին տնտեսութիւն : Երանի թէ կարենայի զայս առնել եւ զայն չըթողուլ, այսինքն միանգամայն սպասաւորել հացի սեղանին եւ տնտեսութեան բանին : Քա՛ւ թէ այսպիսով ես մի տրտունջ կըբառնամ, այլ խոնարհելով Աւետարանի պատուիրին առաջ՝ զիս իբրեւ անպիտան ծառայ համարելով, ինչ որ պարտիք էր զայն սիրով կատարել : Դեռ շատ ու շատ պարտիքներ կան ու կըմնան, որչափ Տէր

Աստուած կեանք տայ եւ յաջողէ ըստ չափու կարողութեանս պիտի վճարեմ պարտիքներս, եւ թէ շատ եւս պարտիքներ մնան դեռ, զայն եւս կտակ կըթողում յաջորդիս: Արդի աշխարհի եւ ժամանակիս պահանջման համեմատ, ոչ ոք Հայրապետ կարող է իւր եւ ժողովուրդի ցանկութեան չափով կատարել այն ամէն պարտիքներ լիովին եւ ամբողջապէս, որ այլ եւս պարտիքներ չմնան:

Այժմ կըմնայ ինձ հացի սեղանի հետ կատարել նաեւ այս նուիրական ու քաղցր պարտիք, այն է Աստուածաշունչի սպազբութիւնը, որ Մայր Աթոռի սպարանէն ելած իբրեւ առաջին երախայրիք պիտի համարուի: Եւ այս ինձ համար մեծ մխիթարութիւն է, եթէ Տէր յաջողէ եւ ես կարենամ արժանապէս կատարել այս բարի ձեռնարկութիւնը, բազմաթիւ օրինակներ սպազբել տալով Սուրբ Գիրքը՝ նուիրել Հայոց եկեղեցական ուխտին եւ բոլոր հաւատացեալ ժողովուրդին:

Եւ այսպէս Սուրբ Գրոց ճրագը գրուանին տակէն հանել եւ դնել բարձր աշտանակի վերայ, որ Հայոց Լուսաւորիչ Սուրբ Գրիգորի մթնացեալ տունը բովանդակ լուսաւորէ: Բացատրեմ. Ս. էջմիածնայ Մատենադարանին մէջ թագուցեալ կըմնան, ինչպէս ճրագ գրուանին տակ, բազմաթիւ Սուրբ Գրոց ձեռագիր օրինակներ, որոց մէջէն ընտրելով մի աւելի հին եւ ընտրելագոյն օրինակը՝ անփոփոխ ճշտութեամբ այդ օրինակին վերայ պիտի սպազբուի Աստուածաշունչ Գիրքը: Մեր մտադրութիւնն չէ ընաւ ուսումնասիրական կերպով համեմատել օրինակներ եւ մի առ մի նշանակել նոցա տարբեր ընթերցումները. զի այդ դժուարին է եւ միջոցներ կըպակսին. ես լաւագոյն եւ օգտակար կըհամարիմ գէթ այժմ Աստուածաշունչ Գիրքը ժողովուրդին տալ եւ ոչ թէ ուսումնասէր բանասէրներուն հետաքրքրութեան արժանի մի նոր սպազբութիւն ընծայել:

Բայց գիտէ՞ք, ժողովուրդ Հայոց, Հայրիկ, որ Սուրբ Լուսաւորչի տան Լուսարարապետն է, մի կանթեղ վառելու ձէթ չունի: Այս տեղ ինձ յարմար է կրկնել մեր հայ աշուղին երգը.— «Հաղպատու լուսարար Սայաթ Նովէնեմ, մէ կանթեղ վառելու ձէթ չունիս»:

Գիտեմ ես, ժողովուրդ Հայոց, դու խստապահանջ ես, թեքեւս ասես, Հայրիկ, ձէթն էլ դու հոգա՛: Երանի՛ թէ Մայր Աթոռը, որ հարստութեան միայն հռչակն ունի, կարող լինէր հոգալ այս նուիրական եւ սուրբ պարտիքը եւ

ես յայնժամ հանդիստ կըլինէի մուրացիկ դժուարութենէն. դիտէ՛ք, եթէ աշխարհիս վրայ կայ մի դառն ու դժուարին բան, այդ է, որ ուրիշէ բան մի կըլինդրես: Սակայն, ես ո՞ւմ համար կըլինդրեմ, ինձ եւ անձի՞նս համար, թէ ձեր հոգեւոր կրթութեան համար. եթէ փող կըլինդրեմ ձեզմէ անիրաւ մամոնայի դուզնաքեայ լուծաներ, անդէն պիտի վերադարձնեմ ձեզ Աստուծոյ Բանին շնորհաց Մատեանը: Կշռեցէք դուք ինքնին, թէ ինչ համեմատութիւն կայ կենաց Բանին ու մամոնային մէջ, մինն լոյս է եւ լուսաւորող, իսկ միւսն հող է եւ անարգ, զոր կը կոխեն մարդիկ եւ կանցնին:

Յիսուս՝ անիրաւ մակդիր տուած է մամոնային, երբ մարդիկ զայն չարաչար ի գործ կըգնեն միայն աշխարհիս կեանքի վայելչութեան համար, ոչինչ բաժին տալով երկնից արքայութեան: Խնդրեցէք նախ երկնից արքայութիւն եւ այն ամենայն յաւելցի ձեզ, ասաց Յիսուս. եւ ի՞նչ է այդ յաւելումն, եթէ ոչ աշխարհիս մեր կեանքի համար բովանդակ վայելից պիտոյքներ: Մեք դիտենք ու չենք ժխտեր, որ աշխարհիս անիւ այդ անիրաւ մամոնայով կըդառնայ եւ միշտ նիւթական միջոցներ օժանդակ են մարդոյն բարեգործութեան. ինչպէս հոգին առանց մարմնոյն ոչինչ կարէ գործել, այսպէս եւ ամենայն հոգեւոր ձեռնարկութիւնք ժողովուրդի ընծայաբերութեամբ յաջողուածն է:

Ազգային թէ նոր եւ թէ հնութեան պատմութիւն ցոյց կուտայ մեզ, թէ ոչ ոք եկեղեցական կամ հոգեւորական դասէն, թող լինի նա Հայրապետ, կարող եղած է ինքնին իւր առանձին աշխատութեամբ մի նշանաւոր գործ յառաջ բերել. եւ թէ մեր այնչափ վանորէից աննման հոյակապ տաճարներ, թէ ժողովուրդին համար մեծակատոյց ժամատուններ, նոյն իսկ զբական վաստակոց հեղինակութիւններ, բարերար մեկենասներու ձեռքով ի լոյս հանուած են եւ այդ ամէն ջերմեանդ ժողովուրդի առատաձեռն նուիրատուութեամբ կատարուած մեծագործ յիշատակներ են: Ուրեմն Հայ. Եկեղեցւոյ սիրելի եւ բարեպաշտ ժողովուրդ, ձեր նիւթական օժանդակութիւնը պէտք է միանայ եւ մասնակցի մեր այս հոգեւոր ձեռնարկութեան:

Այսչափ համառօտելով չըջարեբականիս թուղթ, այլ եւս չեմ երկրայիք, այլ կըհաւատամ, որ Հայոց Հայրիկի այս հոգեւոր ձեռնարկութեանը սրտի մտօք պիտի օժանդակէ

բարեպաշտ ժողովուրդ Հայոց: Մի՞թէ ճրագին ձէթն էլ իմ պարտքն է, ո՛չ, այդ պարտք եւ բաժին ջերմեռանդ հայ ժողովուրդին է: Ուստի ծերունի Հայրապետ ձեզ է դիմում. ձրի եւ անվճար չի խնդրեր՝ այլ փոխ կրխնդրէ ձեզմէ ձէթ եւ իւղ . եւ ի՞նչ պիտի փոխարինէ, գիտէ՞ք, նիւթական չնչին մամոնային տեղ՝ յաւիտենական Բան, անարգ թրուշային տեղը՝ Աւետարանի պատուական մարգարիտ . ինչպէս ցոյց կուտայ Քրիստոսի առակը: Իմաստուն վաճառական, ինչ որ ունէր ծախեց, որպէս զի գնէ այդ թանկագին չնաչխարհիկ մարգարիտ: Սուրբ Գիրքը՝ գին չունի եւ գնով չի ծախուիր, Մովսէս եւ Յիսուս զայն ձրի առին եւ ձրի տունն ժողովուրդին: Այլ ես ո՞վ եմ, որ զայդ առնեմ. մարդ կարօտ եւ ապիկար:

Առէ՛ք ուրեմն, գնեցէ՛ք այդ Աստուածատուր մարգարիտ, զոր Յիսուս երկնային սիրոյ անհուն ծովէն հանեց եւ բերաւ մեր աշխարհ, պարգեւեց իւր հաւատացեալ ժողովուրդին. փոխարէն ոչինչ խնդրեց, բայց միայն սիրտ եւ հաւատք: Առէ՛ք, ո՛վ ընտանիք Հայոց, այդ երկնային հացի մանանայն, դրէ՛ք ձեր հացի սեղանին վերայ, կորստական կերակուրին հետ անմահական կերակուրն եւս ճաշակեցէ՛ք, որպէս ասաց Յիսուս. «Երթա՛ք գործեցէ՛ք, մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ ի կեանս յաւիտեանից»: Քրիստոսի հայր Դաւիթն էլ նոյն կը յորդորէ. «Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք զի քաղցր է Տէր, երսմեալ է այր, որ յուսայ ի Նա»:

Ոչ ոք կարողացաւ աշխարհիս գիտնոց կաճառէն այդ յաւիտենական կենաց կերակուր պատրաստել, բայց միայն Աստուած եւ Աստուածորդին Յիսուս Փրկիչ: Ահա այդ կերակուրի անսպառ շտեմարանը Սուրբ Գիրքն է: Երանի՛ այն բարի քրիստոնեայ ընտանեաց, որ այդ սուրբ շտեմարանն ունին իրենց տան մէջ. այն տունն Աստուծոյ օրհնութեամբ կը լիցուի: Երանի՛ նաեւ այն տան, ուր Աւետարանին ճրագը աշտանակին վերայ գրուած ողջ տունը կը լուսաւորէ եւ այլ եւս մոռտ չունին այն տեղը խաւար եւ գայթակղութիւն:

Իսկ խաւար է այն տուն, որ թէեւ բազմալոյս ջահեր վառուին, երբ Սուրբ Գրոց լոյսն ու շող չի կաթիր, նոցա կեանք խաւար է Աւետարանին լուսոյ առաջ եւ նոյն իսկ ցորեկի արեւուն տակ՝ գիշերային մթութեան մէջ կը չրջին, թէ եւ Քրիստոս ասաց. «Որ գնայ ի գիշերի գայ-

թափղի», բայց այս աշխարհիս մէջ ամենամեծ դայթափղու-
թիւնն էր՝ արեւուն առաջ կըլինին . երբ Աւետարանին
համատարած լոյս չի ծագեր մեր հողւոյ աշխարհին վերայ,
այնուհետեւ հաւատք, կրօն, Աստուածպաշտութիւն կը
հեռանան, մարդ յայնժամ՝ միայն Քրիստոնեայ անուն
կըկրէ ըստ Պօղոսի բանին. «Որք ունիցին զկերպարանս Աստ-
ուածպաշտութեան, այլ ի զօրութենէ անտի հեռացեալք»:

Այժմ զգէ՛մ բանիս առ ձեզ զարձուցեալ, ո՛վ զուք
ուխտադիր Սրբազան պաշտօնեայք Հայ. Եկեղեցւոյ, Եպիս-
կոպոսք, վարդապետք եւ քահանայք, որ ընտրեալ եւ
կացուցեալ էք իբրեւ հովիւ եւ առաջնորդ եւ ուսուցիչ
եւ խրատիչ եկեղեցւոյ հոգեծին որդւոց . ձեզ հաւատացեալ
եւ յանձնեալ է հոգեւոր տեսչութիւն հօտին Քրիստոսի .
զի դուք յաւէտ մերձաւոր եւ ընտանի էք ժողովուրդին,
այն ինչ ընդհանուր Հայրապետ մեծազոյն մասամբ հեռու
կայ ի տեսութենէ իւր սիրեցեալ հօտին: Գիտէ՛ք,
կանխապէս մեզ տուեալ է ի վերուստ անտի ի ձեռն Մով-
սիսի եւ Յիսուսի այդ Աստուածային պատգամախօս Սուրբ
Գիրք, որ լոյս է եւ կեանք մարդկան . եւ մեք անտի
լուսաւորելով պիտի լուսաւորենք Սուրբ Եկեղեցին: Ու-
րեմն առաւել մեզ պիտոյ է Սուրբ Գրոց լոյս, որով իբրեւ
պայծառ ջան եւ ճրագ կարող լինիցիմք լուսաւորել տուն
Աստուծոյ եւ տաճար եկեղեցւոյ:

«Ճրագ մարմնոյ ակն է, եթէ ակն քո առատ է, ամենայն
մարմինդ լուսաւոր եղիցի» ասէ Յիսուս: Արդ եթէ մեք
իբրեւ լուսատու ճրագունք համարեալ՝ ունիմք լուսաւորել
զեկեղեցին, սակայն եկեղեցւոյ պաշտօնեան ուստի՞ ունիցի
զլոյսն: Եթէ ինքնալո՞յս իցէ, ո՞չ ապաքէն մեք զլոյսն
ի լուսոյ Սուրբ Գրոց առնումք եւ այնպէս ապա կարող
լինիմք լոյս տալ Աստուծոյ տաճարին, որ է եկեղեցին:

Արդ եթէ ակն մեր վատ է եւ խաւար եւ չունիցիմք առա-
տութիւն լուսոյ Սուրբ Գրոց, յայնժամ աւա՛ղ մեզ եւ վա՛յ
ժողովրդեան . երկու դասն եւս խաւար լինելով՝ միթէ
կարիցէ՞ այլ եւս կոյր կուրի առաջնորդել, այլ կայ մնայ
մեզ ի խորխորատ անկանիլ ըստ Աւետարանի Բանին: Եւ
ո՛վ առաւել պատասխանատու մնայ առաջի պահանջող
դատաւորին: Եւ գիտէք դուք եւ լսէք հանապազ ժողո-
վըրդեան խտտագոյն դատաստան, որ դատափետ առնելով
զմեզ պարսաւազիբ լինի միշտ . խօսելով եւ զրելով, թէ
ըստ ամենայնի՝ մեղաւոր կղերն է: Հայրապետն ապկար,

Առաջնորդն անհողատար, Վարդապետն անքարող, Գահանայն տգէտ եւ տգիտագոյն, եւ այլն եւ այլն:

Այս դատաստան թէ ստոյգ է կամ անստոյգ, զայն թողումք յայլում նուազի՝ ուղիղ դատաստան ընդ միտս առնել եւ ոչ ընդ աչս դատել, ըստ Բանի Աւետարանին: Սակայն գիտակցութիւն խղճի մերոյ ստիպէ զմեզ խոստովանիլ առաջի Աստուծոյ եւ առաջի եկեղեցւոյն, թէ չեմք կարող արդարանալ:

Ուստի ուշաբերել պարտ է մեզ, զի ժողովուրդի այս դատաստան կարի՛ ծանր է եւ նախատինք մեզ, եւ գիտեմ թէ յիմ վերայ առաւել բարդի եւ ծանրանայ, ճանաչելով զմեծ պարտիս կոչման իմոյ, որ է ընդհանուր տնտեսութիւն Հայ. Եկեղեցւոյ: Եւ միայնակ իմ տնտեսութիւն զի՞նչ կարէ առնել, որ յաւէտ փակեալ կամ ընդ պարսպաւ Մայր Աթոռոյն. յո՛ւշ առնեմ ձեզ, զի եւ զուք ճանաչելով զպարտիս կոչման ձերոյ, յամենայն սրտէ օժանդակ լինիջիք ինձ:

Մանաւանդ որ այժմ հասեալ կամ ի վերջակէտն ծերութեան, սակաւիկ մի եւս՝ կայ մնայ ինձ յաւիտենական կայան: Երանի՛ թէ եւ ինձ պատահէր նոյն երջանիկ աւուր մահն, բարւոք ծերութեամբ ննջել առ հարսն իմ: Այլ թէ ողորմած Տէր, որ իշխան եւ ոստիկան է մահու եւ կենաց, ինձ տակաւին յաւելոյր եւ շնորհէր կեանս, թերեւս օգնականութեամբ ազօթից ձերոց կարող լինէի վճարել զհովուական պարտիս իմ, որ առ Եկեղեցին Հայոց:

Բայց ուսոյց մեզ Քրիստոս եւ միշտ յիշեցուցանէ մեզ իւր համառօտ ազօթից դասն, ոչ խնդրել եւ ոչ ազօթել ըստ կամաց սրտի մերոյ եւ ցանկութեան, այլ միայն զայս ազօթել՝ «Եղիցին կամք Հօր որպէս յերկինս եւ յերկրի»։ Ամէն:

ՄԵՐՏԻՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Փրեցաւ կոնդակս Երջաբերական յամի շնորհաց Փրկչին 1900 ի 1-ն Յունուարի. և ըստ տոմարիս ՌԾԻԹ. ի Հայրապետութեան Մերում է. ամի, յԱրարատեան Մայր Աթոռոյ Ա. Էջմիածնի, ի Վաղարշապատ:



ԿԵԱՆՔ ՅԻՍՈՒՍԻ (՝)

ԻՐ ԾՆՆԴԵՆԷՆ ՄԻՆՁԵՒ ՀԱՄԲԱՌՆԱԼԸ ՓԱՌՕՔ Ի ՅԵՐԿԻՆՍ

Ի ԳԵՐ. ՏԷՐ ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՇԻՇՄԱՆԵԱՆ

Գ

Գառուս Մոզուց . — Մոզերն յԱրեւելս . — Մոզերն յԵրուսաղեմ . — Մոզերն ի Բեթլեհեմ . — Երկրպագութիւն Մոզուց . — Անոնց նուերները՝ ոսկի, կնդրակ եւ զնուռս :

Սրբազան աւետարանիչներէն Մատթէոս միայն կը պատմէ մոզերուն Երուսաղէմ գալը՝ երկրպագութիւն մատուցանելու համար մանուկ Յիսուսի, բայց թէ ո՞ր ժամանակ եկած են՝ որոշ չի՛ գիտցուիր . յայտնի է սակայն որ՝ Հերովդէս, Յիսուսի ծնանելէն ետքը, հազիւ մէկ տարի ալ թագաւորեց ու սոսկալի ախտով մը տանջուելով փչեց իր հոգին . հետեւաբար մանուկն Յիսուս դեռ տաճարը չ'ընծայուած, եւ կամ, հաւանօրէն տաճարը ընծայուելէն քիչ ետքը եկած ըլլալու են անոնք, որմէ յետոյ սուրբ ընտանիքը՝ աստուածային մանուկն իրենց հետ առած, Եգիպտոս գացին՝ համաձայն այն աղլարարութեան՝ զոր հրեշտակն ըրաւ Յովսէփի տեսլեանը մէջ (Մատ. Բ. 13) :

Բայց ո՞ր ժամանակ ալ եկած ըլլան, այդ երջանիկ արեւելցիներն՝ աշխարհի առջեւ, գլխաւոր մէկ հրաշալիքն հանդիսացած են յաստուածակոյս կողմանէ՝ յայտարարող թէ անբաններու գծուծ մտերին մէջ դրուած նորածին, աղքատիկ, գողգոթ այդ մանկիկը՝ է Որդի Աստուծոյ, եւ, պարզած են սրտաշարժ տեսարան մը Բեթլեհէմի մէջ՝ ա՛յնքան ուշագրաւ որքան հրահանգիչ իր փրկարար հանգամանքներով : Բայց դիտելէ առաջ այս սրտառուչ տեսարանը Դաւթի քաղաքին մէջ, երթմանք դէպ ի ծայրագոյն արեւելք, հո՛ն, Զրադաշտներու այն երկիրը՝ ու՛ր ծնունդ առաւ աստղագիտութիւնն ու ա՛յնքան պանծալի հանդի-

(*) Մեր Սրբազան Յօդուածագիր իւր առաջին յօդուածին մէջ հետեւեալ սրբագրութիւնք կ'ուզէ արձանագրել . «10 ը էջին 5 ըդ տողին մէջ «Աղջիկ դու, քեզ անեմ, արի՛» պիտի ըլլայ «Պատանի դու եւ այլն .» իսկ 6 ըդ տողին մէջ ալ «աղջկան» բառը պիտի ըլլալ «մանկան» : Նոյնպէս էջ 9, տող 19 փոխանակ «երկոտասանամեայ Մանուկ, Տաճարին մէջ» կարգալու է «Նազարէթ քաղաքի փողովրդանոցին մէջ» :

սացաւ , հոն , ուր աստուածային նախախնամութիւնը՝ տեղ-
ւոյն ժողովրդական բարուց ու դադափաներուն ամենէն յար-
մարագոյն աղբարարը՝ այն սքանչատեսիլ աստղը շողացուց՝
առաջնորդելու համար երկրին պատկառելի անձնաւորու-
թեանց՝ Չանդիկ կրօնի պետերուն՝ առ ոտս նորածին Փրկչին՝
յերկիրն Իսրայէլի :

Պայծառ էր գիշերն ու խաղաղիկ՝ երբ այդ երկրին երեք
մեծամեծ իշխանները , առաջնակարգ աստեղագէտներ , ընդ-
հանուր ժողովրդէն Մոգ անունով որոշուած , աստղերուն
ներդաշնակ ընթացքը դիտելու ելեր էին . . . եւ ահա՛ , յա՛ն-
կարծ , կը նշմարեն ուրիշ աստղ մը՝ նոր ու պայծառ՝ որ
երկնից վրայ կը շողչոյայ եւ որուն արտասովոր ընթացքն
ու խորհրդաւոր փայլը կը դրաւեն իրենց բովանդակ ուշն
ու ուրուշը ու հիցում կը պատճառեն :

Այս անակնկալ երեւոյթը յա՛նկարծ կը յիշեցնէ իրենց
նախնական պատգամ մը՝ յընթացս դարուց արեւելքի մէջ
հռչակաւոր , եւ կըմտածեն . . . — մի՛ գուցէ ըլլայ այն աստղը՝
զոր եօթը դարերէ առաջ գուշակած էր Բաղամա՝ Բէճովրայ
որդին , որ Բաղակայ՝ Մովարու թագաւորին զէմը կանգնած ,
անվեհեր կերպով յայտարարած էր թէ — «Մագեսցէ աստղն
Յակոբայ , եւ յարիցէ այր յԻսրայելէ , եւ հարցէ զիշխանս
Մովարայ» (Թիւլ. ԻԴ. 17) : Անմիջապէս նախազգացում մը
կ'ունենան աստուածային ներշնչմամբ , ա՛ պաքէն — կ'ըսեն
— ծնած ըլլալու է ուրեմն Իսրայելի այդ գուշակուած թա-
գաւորը , . . . եւ , առանց վարանելու , կը փութան մեկնիլ
իրենց երկիրներէն՝ երթալ ի Հրէաստան՝ երկրպագութիւն
մատուցանելու մանուկ թագաւորին :

Չե՛մք սքանչանար արդեօք երբ կը տեսնենք այդ Չան-
դիկ ազանդաւորներն ա՛յնքան փութկոտ իրենց ձեռնարկին
մէջ՝ զոր կորովի հաւատարմութեամբ մը ի գործ կը գնեն՝
հետեւելով աստուածային շնորհաց ազդեցութեանը . . . :

Ըստ աւանդութեան՝ թագաւորներ էին անոնք ու բազ-
մաթիւ պատճառներ կրնային ունենալ յետաձգելու այդ-
պիսի հեռաւոր ու տաղտկոտ ուղեւորութիւն մը : Բայց՝
ո՛չ , պէտք էր անմիջապէս ճամբայ ելլել , անցնել զանա-
զան քաղաքներէ , իրենց անձերն օրինակ ընծայել զանա-
զան ժողովուրդներու , մտնել Հրէաստան աշխարհը , տես-
նուիլ բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ , հարց-
նել , քննել , տեղեկանալ նո՛յն իսկ քահանայապետներէ ,
կրօնի վարդապետներէ , հարցնել մինչեւ անգամ երկրին

իշխանին , յայսնել անոր , անկեղծաբար , իրենց արամադրու-
թիւնները հանդէպ Հրէից նորածին թագաւորին , առ ոչինչ
գրել այն հեգնութիւններն ու այլանուններն՝ որ բնակա-
նաբար պիտի ուղղուէին իրենց՝ իբրև իմաստուն անձնա-
ւորութեանց՝ երբ սա տարօրինակ ու անակնկալ հարցումն
ուղղէին՝ — « Ու՛ր է որ ծնաւ արքայն հրէից , զի տեսաք
զաստղն նորա յարեւելս եւ եկաք երկիրպագանել նմա . »
եւ այս ամենը անշուշտ կանցնէր իրենց մտքերէն , եւ սա-
կայն պէտք էր մեկնիլ , ու կըմեկնին՝ բանի տեղ չգնելով
բոլոր այս նկատումներն՝ մտածելով մանաւանդ որ ասու-
ուածային կոչման մը հանդէպ՝ բարոյական մարդուն համար
ամենէն մեծ ճշմարտութիւնն , ամենէն գերագոյն իրաւ-
ունքը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ արհամարհել մարդկային
նկատում ու հնազանդիլ :

Միայն այս երջանիկ մոգերուն վրայ չէ որ փայլեցաւ
այն խորհրդաւոր աստղը , Աստուած մեր վրայ ալ միշտ կը
փայլեցնէ զայն՝ թէպէտ տարբեր կերպով : Աստղ մըն է
Քրիստոսնեայ ընտանիք մը՝ որ կ'առաջնորդէ իր զաւակ-
ներուն ի բարին , ի գեղեցիկն եւ ի կատարեալն . աստղ
մըն է քահանան իր եկեղեցւոյն . հովիւն իր ժողովրդեան ,
զաստիարակն իր աշակերտին , հարուստը աղքատին , ծերը
երիտասարդին , մեծը փոքրին , տէրը իր ծառային՝ քրիստո-
սէութեան ա՛յն լուսով՝ որ կ'առաջնորդէ ի փրկութիւն :
Վիշտը , տառապանքը՝ զոր յաճախ կը կրենք այս աշխարհի
մէջ՝ Յիսուսի աստղն է այն . բարոյականը՝ որ զմեզ բարուց
ապականութենէ ետ կը կեցնէ՝ աստղն է Յիսուսի . բարի
օրինակը՝ որուն կը հետեւինք եւ զմեզ կ'ուղղենք , Յիսուսի
աստղն է , վերջապէս ինչ որ հաւատքը կ'արթնցնէ մեր
սրտին մէջ , ինչ որ յոյսը կը մխիթարէ , ինչ որ սէրը
կ'ողբերէ՝ միշտ Յիսուսի աստղն է զոր եւ մեք , ի կարգին ,
պիտի կրենք այս ամէնուն վրայ :

Տեսնենք հիմայ մոգերը Երուսաղէմի մէջ : Հերովդէս
էր , այն ասնն , Հրէաստանի թագաւորը՝ որ յափշտակած
էր Յուզայի արքայական գահը . եւ թէպէտ զինքը շողո-
քորթողներ Մեծն Հերովիկոս տիտղոսը կուտային իրեն ,
սակայն Հերովդէս՝ բռնապետներուն մէջ ամէնէն պժգային
էր : Իւր իսկ զաւակները սպաննել տուած էր , եւ ամեն տեսակ
անգթութեամբ եւ զեղխութեամբ իւր ողորմելի կեանքը
կանցնէր երկրիս վերայ :

Այս անողոք թագաւորը անաբեկեցաւ յանկարծ երբ լսեց

որ՝ բարձր գիրքի տէր մէկ քանի օտարականներ՝ արեւել-
քէն եկեր կը հարցնեն թէ՛ «հրէից թագաւորն ո՛ր ծնած
է», դողաց թշուառը իր բոլոր մեծութեամբ հանդերձ . ինչու՞
արդեօք . մտուրի մը մէջ ծնած հասարակ մանուկ մը ի՞նչ
կարող էր ընել իրեն . . . բայց անգթութեան կիրքը կու-
րացուցեր էր այդ անագորոյն իշխանը , եւ , ինչպէս որ
չարագործը կը սոսկայ փոքրիկ տերեւի մը աննշան սօսա-
ւիւնէն , խռովեցաւ եւ Հերովդէս՝ տեսնելով իր առջեւ
բացուած վտանգաւոր այն մեծ անդունդը՝ ուր պիտի գլորէր
իւր անիրաւութեան ոյժը . անշուշտ չէ՛ր կրնար գիտնալ
ամբարիշտը թէ՛ արեւելքի իշխաններուն խնդրած Հրէից
թագաւորը Միահեծան Տէրն էր տիեզերաց , աշխարհի թա-
գաւորներուն հետ քնաւ գործ չ՝ունէր՝ եկած էր յաշխարհ
լո՛կ մարդկային ազգը սատանայի լուծէն փրկելու , հոգեւոր
գերութեան շղթաները ջախջախելու , Աւետարանի փրկարար
եւ աւետաւոր պատգամն հաղորդելու մարդկութեան , զայն
առաջնորդելու դէպի երկնային յաւիտենական երանութիւն
ուր կը տիրէ իստպարութիւն :

Հերովդէս կրճեռնարկէ իր դաւերուն՝ շողոքորթութեան
ու կեղծաւորութեան քօղին ներքեւ ծածկելով իր վայրա-
գութիւնը , եւ տեսէ՛ք ինչպէս : — Երուսաղէմ քաղաքին
ճիշտ մէջտեղը , Հերովդէս թագաւորի դէմ յանդիման , բազ-
մնալ կրտսնուին քահանայապետներ ու ժողովրդեան զպիր-
ներ : Ի՛նքը Հերովդէս հրաւէր կարգացած էր անոնց՝ հարց-
նելու համար թէ՛ ո՞ր պիտի ծնի Քրիստոսը : Պարկառելի՛
էր ասեանը , հո՛ն էին օրինաց նախանձախնդիրներ՝ Իսրա-
յէլի ջահերը , երբայական ազգին մեծամեծները եւ ա՛ն վե-
հաշուք ատեանին յանձնուած էր այս կնճոռոտ խնդրոյն
լուծումը — «Ու՞ր ծնանիցի Քրիստոսն» (Մատ. Բ.) . . . եւ
ամէնքը , մէկ բերան , կը գոչեն . — «Ի Բեթլեհէմ Հրէաստա-
նի . զի այսպէ՛ս գրեալ է ի ձեռն մարգարէին . Եւ դու ,
Բեթլեհէմ , երկիր Յուդայ , ոչ ինչ կրտսեր ես յիշխանս
Յուդայ , ի քէն ելցէ ինձ իշխան՝ որ հովուեսցէ զժողովուրդ
իմ զԻսրայէլ» (Մատ. Բ.) : Արդարեւ ասկէց աւելի սրտոտ,
անկեղծ ու ճշմարիտ պատասխան մը չէ՛ր կրնար ըլլալ .
իբրեւ պատկառելի ատեանի մը կողմէ արտասանուած կարուկ
ու պատուաբեր պատասխան՝ իր ապացոյցովը հանդերձ :
Բայց տեսէ՛ք մարդկային գաղափարներու տարօնինակ հա-
կասութիւնները , . . . ա՛յն մարդիկ որ աներկիւղ կերպով
նրապարակաւ խոստովաներ էին ճշմարտութիւն , իսկոյն

վեհերոտ ու երկչոտ դիրք մը կը ստանան կրք կը տեսնեն որ Հերովդէսի զայրոյթը տակաւ կը տորթորթի, ա՛լ չեն ուղեր իրենց նորածին մանուկ թագաւորին իշխանութիւնը ճանչել . կը քարանայ իրենց սիրտը եւ կը փակուի իսպառ այն ճշմարտութեան դէմ՝ զոր իրենք խոստովանեցան ա՛յնքան մեծ քաջութեամբ, եւ ահա՛ այն ատեն կը սկսի պայքարը՝ խաւարը կ'ելլէ լոյսին դէմ, վատաստութիւնը՝ կորովի դէմ, խարդաւանքը ճշմարտութեան դէմ . ու ճշմարիտ արգարութիւնը, սրտի միամտութիւնը իրաւունք կրմնայ միայն արեւելեան Մոզերուն՝ որով եւ կ'իբրագործի մարդարէպիան այն պատգամը թէ՛ — «ժողովուրդ՝ զոր ո՛չ գիտէի՝ ծառայեաց ինձ եւ ի լուրականջաց լուաւ ինձ» (Սաղ. ԺԷ. 45) : Այո՛, ճշմարիտ արգարութիւնը կորովի Մոզերուն միայն կրմնար բաժին՝ որով, առանց որ եւ է նկատողութեան, նոյն իսկ Հերովդէսի կը հարցնեն՝ իմանալու համար թէ ու՞ր ծնած է Հրէից թագաւորը . անվեհեր կը յայտարարեն Հրէաստանի թագաւորին՝ թէ Հրէից նոր թագաւոր մը ծնած է ու պիտի երթան անոր երկրպագելու . կ'արհամարհեն ամէն առարկութիւն՝ որ կրնային ուժացնել զիրենք՝ իրենց սրտի եռանդէն : Թո՛ղ կասկածոսն Հերովդէս զչարի ու խռովի . թո՛ղ խստապարանոցն Սինակոկ գայթակղի ու քրթմնջէ, թող Հրեաները մըտածեն ու ըսեն ի՛նչ որ կ'ո՛ղեն, — ո՛չ Հրեաներու սնապաշտութիւնը, ո՛չ Հերովդէսի դաժանութիւնը, ո՛չ իրենց սպառնալու ղտանգը, բնաւ խոչընդոտն չեն մատուցանելու փրկիչ Աստուծոյն՝ իրենց պատիւն ու երկրպագութիւններն, որուն համար միայն եկեր էին հեռու աշխարհներէ մինչեւ ի Հրէաստան . հետեւաբար կը կազմուի կարաւանը, կը դրդի Երուսաղէմ եւ ուղեւորք ճամբայ կ'իջնան դէպ ի Բեթլեհէմ : Բայց ո՛վ սքանչելիացս . — ա՛յն աստղը՝ որ մոզերուն Երուսաղէմ մտնելու ատեն աներեւոյթ եղած էր, երբ քաղաքէն դուրս կ'ելլեն Բեթլեհէմ երթալու համար, վերստին կը սկսի շողալ, ո՛չ այնպէս ինչպէս տեսած էին յարեւելս, այլ իբրեւ առաջնորդ իրենց ուղեւորութեան՝ մինչեւ հո՛ն «ուր էր մանուկն» . հո՛ն կը կասի աստղը, հո՛ն կ'անգ կ'առնեն նաեւ մոզերը . . . եւ Բեթլեհէմ են, կիսաքանդ այրի մը առջեւ՝ որ աիեղեւրաց թագաւորին ծննդավայրն էր եղած, սակայն մոզերը երբէք չեն տարակուսիր, կը մտնեն այր'ն մէջ, ներքին լոյս մը կ'ողողէ զիրենք ու կը ճանչեն թէ՛ այդ ողորմելի այրին մէջ խանձարրապատ աղքատիկ մանկիկը՝ նոյն ինքն

խոստացեալ փրկիչն է՝ յորում պարտակուած են աստուածային բոլոր գանձերը: Հաւատքը կըյայանէ անոնց այս նորածին թագաւորին մեծութիւնները. ծունր կըզնեն ու կ'երկրպագին խորին խոնարհութեամբ, կըբանան իրենց գանձերը եւ կըմատուցանեն մասնաւոր նուէրներ՝ զոր յատկապէս իրենց երկիրներէն բերած էին — ոսկի, կընդրուկ եւ զմուռս խորհրդաւո՛ր պատարագներ՝ որ զգալի կերպով կըբայատեն՝ թէ Յիսուս Աստուած է, թէ Յիսուս Մարդ է, Յիսուս թագաւոր է: Աստուծոյ եւ եթ վայել էր կնդրուկը, մարդուն կըպատկանէր զմուռը մարմինը յետ մահուան զմոսկում ու պահպանելու համար, իսկ ոսկին հարկ էր տալ թագաւորին՝ իբրեւ սովորական տուրք:

Բայց ուրիշ խորհրդաւոր հանգամանք մը աւելի կըգրաւէ մեր ուշը: Ոսկին՝ նշանակն է մարդասիրութեան, կնդրուկը՝ խորհրդանշանն է աղօթից, եւ զմուռը՝ զղջման եւ խոնարհութեան: Այս երեք պատարագները պարտաւոր ենք միշտ նուիրել, մոգերուն նման, ա՛յն Յիսուսին՝ որ այրին մէջ իբրեւ մանուկ մատաղ պատկեր Հօր Աստուծոյ լուսափայլութեան, կըփափաքի մեր ձեռքերէն ընդունիլ:

Իր աստուածային սրտին մէն մի բարախումը, իր մանկական երկնային աչքերէն հոսած արցունքներուն մէն մի կաթիլը, իր երկրպագելի մարմնոյն մէն մի սարսուռը Սե՛ր կ'աղաղակեն . . . ո՛հ, չի գլանանք այս ոսկին՝ մեր մարդասիրութիւնը. . . եւ որքա՛ն կարօտեալներ կան, Աստուա՛ծ իմ:

Մանուկն Յիսուս կըփափաքի, այն ողորմելի այրին մէջ, մեր ձեռքերէն ընդունիլ կնդրուկը: Իբրեւ մանուկ տկար՝ իր հեծութիւնը, տառապանքը, ցաւն ու վիշտը՝ մեր սրտերու կնդրկաբոյր մաքրութիւնը կը խնդրեն. ապա ուրեմն, ո՛վ Յիսուս, ընդունէ՛, տանջեալդ մանուկ՝ հզօր եւ ամենակարող Աստուած, մեր՛ի սրտէ աղօթից կնդրուկներն ու այցելութիւն ըրէ մեզ:

Փրկիչը նորածին, կըփափաքի մեր ձեռքերէն ընդունիլ զմուռը: Ծշմարիտ Գրիստոնէին պարտքն է նմանող ըլլալ իր Տիրոջ, եւ ի՞նչ էր Յիսուսի կեանքը՝ եթէ ոչ միշտ տանջանք՝ յանուն ծայրայեղ խոնարհութեան, մահու չափ եւ մահու խաչի: Ո՛հ, հայ քրիստոնէի խաչը՝ ո՛վ մանուկ աստուածային՝ Որդի Աստուծոյ՝ ընդունէ իբրեւ մոգերուն զմուռը՝ պատարագ հաշտութեան, քու մանկական ավերուզ մէջ, ու յարութեան փրկարար յոյսը շնորհէ մեզ:

Եւ դու, ո՛վ աստղ սուրբ եւ մխիթարիչ, որ առաջնորդեցիր մոգերուն մինչեւ յ րօրոց աստուածային Փրկչին, երևցի՛ր, ի սկիզբն այս դարուս, մեր սրտերու երկինքին վրայ, ծագէ մեր Սուրբ Եկեղեցւոյ Հաստատութեանը վրայ, չողացիր՝ մեր խաւարուտ մակերեւութ ին վրայ. լուսաւորէ՛ զմեզ, ոգեւորէ՛, հարթէ՛ ամեն առապար մեր քայլերուն հանդէպ եւ առաջնորդ եղիր մեզ զՅիսուս զանելու, սիրոյ զթուփեան, ողորմութեան Աստուածը՝ որպէս զի ըսենք սրտի ամենախոնարհ ծնրադրութեամբ, «Տէր, տեսաք զԱստղն քո յԱրեւելս եւ եկաք երկիր պագանել քեզ»:

ՔԱՐՈՉ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՉԻ

Ի ՔԱՌԱՍՆՈՐԵԱՅ ԳԱՂՈՒՍՏ ՓՐԿՉԻՆ Ի ՏԱՃԱՐՆ

Ի ԳԵՐ. ՏԷՐ ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՄԱՐԿՈՍԵԱՆ

«Տեսին աչք իմ զփրկութիւն ին, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց: (Ղուկ. Բ 30-31:)

Տէրունական տօները մեր փրկութեան խորհուրդը կը յիշեցնեն, եւ մեզ յաւիտենական կենաց ճանքան կառաջնորդեն: Այսօր ալ տէրունական տօն է, այսօր ալ մեծամեծ խորհուրդներ կան յիշելու. կարեւոր դասեր կան սովորելու եւ օգտակար հրահանգներ կան գործադրելու:

Այս օրուան յայտնուող լոյսը թող լուսաւորէ իմ միտքս, որ կենաց խօսքը ուղիղ համառօտեմ ձեզ, եւ մեր ամենուն սրտերն ու կամքերը պատրաստէ, որ սիրով ընդունինք ու գործադրելով արգիւնաւորենք մեր Փրկչին խրատական յայտնութիւններն ու փրկառիթ օրինակները:

Ահա վերստին կրգանք հանդիսատես լինելու մեր Տիրոջ աստուածային փառաց: Ահա այն նորածին, աղքատ, աննշան ու անյայտ կերպով ծնած մանուկը, խանձարուրով փաթաթած՝ մսուրի մէջ հանգչած մանուկը՝ երթալով զարմանալի կերպով կը յայտնուի, հրաշապէս կը ճանչցուի, կը փառաւորի եւ կը հռչակուի:

Մարդացեալ Փրկիչն մեր այս օր քառասնօրեայ մանուկ է, եւ տաճարը կը բերուի որ օրէնքին համեմատ Աստուծոյ

ընծայուի եւ իւր անձով, իւր մարմնով մարդկութիւնը Աստուծոյ ընծայէ, ճշմարիտ հաւատացեալները Հօր որդեգրէ: Այսօր կրգայ Յիսուս ի տաճար ալքատ, աննշան եւ խոնարհ, սակայն ի՛նչ զարմանք, ինչպէ՛ս կը յայտնուի թէ — Նա է Աստուած, Փրկիչ, եւ Լոյս:

Դուք, ժողովուրդ Աստուծոյ, չէ՞ք զարմանար այս կատարուած ամեն խորհրդաւոր բաներուն վրայ. այս ամենուն մէջ չէ՞ք տեսներ Աստուծոյ ամենիմաստ նախասահմանութիւնը, խնամքը եւ ամենակարող զօրութիւնը, եթէ մտքերնիդ ցնորքներու, եւ կամքերնիդ անարժան կիրքերու գերի ըրած չէք, անշուշտ կրտեսնէք եւ կ'իմանաք:

Աստուած իւր ամենակարող զօրութիւնը եւ հզօր բազուկը յայտնելու համար Փարաւոնի խստարտուութիւնը ձեռք առաւ եւ մեծամեծ սքանչելիքներ ու պատուհաններ թափեց Եգիպտոսի վերայ, որ Իսրայէլն արձակէ. այս պատուհաններուն վերջինն էր բոլոր անդրանկանց մահը. այս սքանչելեաց մէջ ուրիշ սքանչելիք մ'ալ կար, որ իսրայելացւոց անդրանիկները այս կոտորածէն ազատ մնացին: Այս աղատութեան յիշատակը պահելու եւ շնորհակալութեամբ Աստուծոյ բարեբարութիւնը օրհնելու համար Մովսէս սահմանած էր օրէնքով որ ամեն առջինեկ արու Աստուծոյ ընծայուի, եւ ապա նուէրով մը հտ առնուի: Եթէ ծնողք կարող էին ոչխար կրբերէին, եթէ աղքատ էին զոյգ մը տարակ կամ աղաւնիի ձագ կրբերէին, եւ հինգ սիկղ կըտային իբր փրկանք. ու մանուկը կըփրկանաւորէին ետ կառնէին:

Երբ քառասունքը լրացաւ, Սրբուհի կոյսն Մարիամ եւ արդարն Յովսէփ մանուկը տարին տաճարը, որ այս օրէնքը կատարեն անոր վրայ: Կըյիչէք անշուշտ անուանակոչութեան աւուր խօսածս, ահա հոս ալ կը տեսնենք, որ Փրկիչը կըղիշանի սահմանեալ օրէնք մը կատարելով, որ օրէնքին արդարութիւնն ու ճշմարտութիւնը հաստատէ եւ իւր հնազանդութեամբը մեզի օրինակ տայ օրինաց հնազանդելու. յամօթ այն ամբարտաւաններուն, որք օրէնք, ազգային եւ կրօնական պարտաւորութիւններ կատարելը նըւաստութիւն կըսեպին անմտաբար, ինչ որ փառք ու պարծանք պիտի սեպէին. եւ այն զզուելի ամբարտաւանութեամբ աւելի կընուաստանան: Քրիստոսի խոնարհութեան ազնիւ ու փստաւոր օրինակը թող ամօթահար ընէ այնպիսիները, որ իրենցը չեղած չնչին ու անցաւոր բանե-

բու վրայ կրմնեամոխն , կամ իրենց սին խելպատակի սնոսի եւ անստոյգ գիտութիւններով կրխորխաան . եւ աստուածգիտութեան ճշմարտութեանց հասու չը լինելով կարհամարհեն , ինչպէս շունը՝ սրբութիւնը . (այսինքն հեշտասէր շնացողները սուրբ բաները , վարուց , խորհրդոց եւ զգացմանց սրբութիւնը կարհամարհեն ու կրծաղրեն .) Թողունք այնպիսիներն իրենց տղմին ու ապականութեան մէջ թաւալելու , մինչեւ որ զգուին ու իրենց աղետալի փորձովն հասկնան որ իրենց ամբարտաւանութիւնը օգուտ մը չէ ըրած իրենց : Մեք դառնանք սոյն փոքր ու մեծ , խոնարհ ու փառաւոր մանկան , ու տեսնանք թէ նա իւր խոնարհութեան մէջ որքա՛ն բարձր է , իւր աննշան վիճակին մէջ որքա՛ն փառաւոր է : Տեսէք մեր ախարտաւան մեծամիւնեւորուն կարծեցեալ փառքն անոր քով ո՛րքան ցած ու անշուք է , ո՛րքան անարդ ու անպատիւ է :

Մարիամ եւ Յովսէփ բերին մանուկը տաճար Աստուծոյ ներկայացնելու եւ օրէնքին պատուէրը կատարելու : Թէպէտ նոքա թագաւորական ցեղէ էին , բայց աղքատ լինելով չէին կարող ոչխար բերել , այլ աղքատի նուէր , իրենց վիճակին համեմատ զոյգ մը աղաւնի : Աղքատութիւնը ամօթ չէ , եթէ ամօթալի գործերէ յառաջ եկած չէ : Նոքա իրենց բուն վիճակը չը պատրուակեցին : Կեղծաւոր մնապարծնեւր , ունայնամիտ խաբւբաներ պարտքով կամ ուրիշ անարժան միջոցներով հարուստի ցոյցք կընեն , եւ ապա կըխայտաւորակուին : Բայց տեսէք այս երանելի արդարներուն անկեղծ խոնարհութիւնը ինչպէ՛ս կըբարձրանայ ու կըփառաւորի :

Այն ատենները Ա. Երուսաղէմի մէջ արգար մարդ մը կար Սիմէօն անուն , որ յուսով կըսպասէր Աստուծոյ աչցելութեան , (Մեսիայի գալստեան ,) եւ Ս. Հոգի կար իւր մէջ , այս բարի մարդը Ս. Հոգիէն հրաման առած էր , որ չը մեռնի , մինչեւ որ ծիրով օծեալը , Մեսիի Փրկիչը տեսնէ : Այս պատուական անձը խիստ ծերացած էր , ըստ ոմանց գրէ թէ երկուհարիւր տարեկան կամ աւելի էր . բայց անշուշտ զանաւան , թուլցած՝ տունը նստած էր : Նոյն ժամուն , երբ աստուածային Մանուկը տաճար բերին , այս փառաւոր ծերունին Ս. Հոգւոյն աղբեցութեամբ ոգեւորուած եւ զօրացած՝ տաճար եկաւ , իւր զողոթունը բազկաց վերայ առաւ այս Մանուկը , եւ զո՛ն սրտով ու միսիթարուած հոգւով իւր փափաքին կատարուելը տեսնելով ուրախութեամբ կըգոչէ . — Ո՛վ Տէ՛ր հիմա արձակէ այս քու ծառադ զէպ ի խաղա-

ղուծիւն , ինչու որ բոլոր ժողովրդոց առջեւ քու պատ-
րաստած փրկուծիւնդ տեսայ . աչքերս տեսան բոլոր ազգաց
Փրկիչը : Դուն , լոյս յայտնեցար հեթանոսաց եւ փառք՝
քու Խարայէլ ժողովրդեանդ : Լոյս՝ ազիտութեան եւ անաստ-
ուածութեան խաւարը լուսաւորելու , եւ աստուածգիտու-
թեան կենդանացնող լոյսին բերելու՝ ճշմարտութիւն սով-
րեցնելով . լո՛յս՝ մեզաց մահաբեր խորխորատին անաւոր
մթութիւնը փարատելով՝ սրբութեան եւ առաքինութեան
լուսաւոր , անվտանգ ճանապարհով անմահական կենաց
առաջնորդելու . լո՛յս , բոլոր աշխարհի , բոլոր մարդկան
ոտքերը անստուգութեան մոլորութենէն ազատելով՝ ճշմար-
տութեան եւ խաղաղութեան ուղիղ ճանբուն մէջ գնելու :

Վերջապէս ահա յայտնուեցար՝ փրկիչ . լոյս . փառք ամեն
անոնց՝ որ կըլիարտին քեզ , կըղիմեն քեզ ու կընդունին
զքեզ իրենց լոյսը , փառքը եւ փրկիչը . անոնց՝ որ ճշմարիտ
խորայելացի եւ քու սեպհական ժողովուրդ են , որ սիրով
քեզ կըհնազանդին , եւ ոչ թէ անոնց որ անուհով եւ
սերնդով իսրայէլացի են . բայց անհնազանդ են քեզ , նոքա
կըմնան նոյն անստուգութեան տագնապալից խաւարին ,
նոյն մեզաց անարգութեան , եւ նոյն կրից գերութեան
կորստեան մէջ : Ես տեսայ , որ դու ես խոստացեալ Փրկիչը ,
օճեալը , երկնից թագաւորը , որուն յուսով կըսպասէինք .
այժմա՛լ ըսպասելու բան չունիմ , ո՛վ Տէր , ինչպէս որ հրամանդ
կապեց զիս մինչեւ հիմա , անանկ ալ նոյն հրամանդ թող
արձակէ զիս ի խաղաղութիւն , ի հանգիստն յաւիտեանական :

Սրբուհի կոյսն Մարիամ եւ արդարն Յովսէփ . ինչպէս
նախորդ սքանչելեաց վրայ նոյնպէս եւ այժմ կը զարմանային
անոր նկատմամբ խօսուած այս մեծամեծ բաներուն վերայ՝
թէ այս անձանօթ մարդիկ ինչպէ՞ս գիտեն այս մանկան ինչ
լինելը , եւ անոր մասին զարմանալի բաներ կը խօսին :
Միթէ մե՛նք , դուք եւ ամեն ոք չե՞նք զարմանար երբ
խորհրդածենք Աստուծոյ այս հրաշալի գործոց վերայ : —
Ո՛վ դրդեց այս զառամեալ ծերունին , որ նոյն ժամուն
մոռնալով իւր ծերութիւնը , տկարութիւնը եւ դանդաղու-
թիւնը , հասնի տաճարը այն ատեն , երբ մանուկը հոն
կըբերէին . ո՛վ ճա՛նչցուց անոր թէ այս քառասնօրեայ մանուկը
նոյն Տէր , Ենովան է զոր Խորայէլ կըպաշտէր , եւ որոյ
գալստեան կըպասէր . ինչպէ՛ս գիտցաւ թէ նա է ժողո-
վրդոց փրկութիւնը , Փրկիչը . ի՞նչ տեսաւ այն խոնարհ ու
տկար մանկան վրայ որ հաւատաց թէ նա է լոյս հեթա-

նոսաց եւ փառք Աստուծոյ ընտրեալ ժողովրդեան . ի՞նչ համարձակութեամբ կրոյայանէ անոր վերայ այս բարձր վսեմ եւ աստուածային յատկութիւնները—: Ահա նոյն Ս. Հոգին, որ կապեց զինքը չը մեռնելու, այժմ ալ ազդեց ու զօրացուց որ այն ժամուն տաճար երթայ, եւ իւր ցանկացած աշխարհի Փրկիչը Տիրոջ օժեպը տեսնէ: Նոյն Ս. Հոգին ճանչցուց այն մանկան մեծութիւնը, սովորեցուց նորա պաշտօնը եւ գիտցուց ինչ որ նոյն ատեն հարկ էր գիտնալ մանկան վրայ եւ համարձակ քարոզել ու հռչակել: Քանզի մանկան այս աստուածային սքանչելի յատկութիւնները Սիմէօն ինքնին չէր կարող գիտնալ եւ չէր համարձակեր հրապարակել եթէ Աստուած սովորեցուցած եւ զօրացուցած չը լինէր: Սիմէօն օրհնեց զանոնք, եւ նայելով Տիրամօր վերայ եւ գուշակելով ապագան ըսաւ անոր . Ահա այս մանուկը կը կենայ Իսրայէլի մէջ շատերուն կանգնելու եւ գլորելու համար:

Կրտսնէ՞ք . ժողովուրդ Աստուծոյ, ի՞նչ բարձր բաներ կրգուշակէ Սիմէօն այս փոքրիկ մանկան համար, որոյ գուշակութիւնը մինչեւ դայս օր ալ կը կատարուի: Յիսուսի երկրի վրայ երեւցած օրէն մինչեւ ցայսօր շատ մարդիկ անոր հաւատարմով եւ հնազանդելով կը կանգնին, մեղքի ծառայելու նուաստ վիճակէն եւ քայքայիչ ապականութենէն կազատին կըսրբուին ու կը կենդանանան: Շատերը չը հաւատարմով եւ չը հնազանդելով՝ կը գայթակղին, կը գլորին եւ չարաչար կընկնին անհաւատութեան, մեղքի եւ մոլութեանց կորուսիչ խորխորատին մէջ . շատ խոնարհներ հաւատքով կը բարձրանան, շատ հպարտներ անհաւատութեամբ կը ցածնան, շատ հակառակոյններ կը լիծին, կը կոտին կը մոլորին ու կը մոլորեցնեն, կը բաժնուին ու կը բաժնեն, եւ իրենց այս խռովիչ հակառակութեան նպատակ կամ պատճառ դրած են զՅիսուս, սակայն բուն պատճառն է իրենց ամբարտաւան կամապաշտութիւնը . իմաստուն ըսուելու անապարձութիւնը, ուրիշներէն բարձր երեւելու եւ տիրելու բուն բաղձանքը: Ապա Սիմէօնի գուշակութիւնը ինչպէս որ ճշմարիտ էր նոյն ժամանակի համար նոյնքան ճշմարիտ է եւ՝ հիմա եւ՝ գալու դարերուն մէջ, եւ անա այս կերպով շատերու սրտի խորհուրդները կը յայտնուին, ոմանց չարասրտութիւնը, ոմանց բարեսրտութիւնը, շատերու իմաստութիւնը, շատերու յիմարութիւնը . ոմանց աստուածասիրութիւնը, այլոց մեղսասիրութիւնը, շատե-

րու հեղ ու խոնարհ հպատակութիւնը, եւ խիստ շատերու մեծամիտ կամակոր ու մարմնապաշտ ապստամբութիւնը: Քանչի ինչ որ Աստուծոյ խօսքին հնազանդելու հակառակ է, այն ապստամբութիւն է: «Մարմնոյ խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է, քանզի անոր չը հնազանդիր:»

Սրբուհի Կոյսն ալ կարելէր խոցուեցաւ Յիսուսի կենաց թշնամիներուն հակառակութեամբ լարած որդայթներէն. մանաւանդ անոր չարչարանաց եւ խաչի մահուան կսկծագին ցաւերէն իւր մայրական գորովալիբ սիրտը որով խոցուելէ աւելի վիրաւորուեցաւ:

Այժմ ձեր մէջ ամենէն բան չը գիտցողն անգամ անշուշտ կրնայ մակաբերել, որ այս ամենը գուշակել աննպաստ պարագայներու մէջ, քառա նօրիայ մանկան մը վրայ եւ վստահաբար հրապարակել, եւ ժամանակին ճշտութեամբ կատարուել, միմիայն ամենագէտ, ամենիմաստ եւ ամենատես Աստուծոյ գործն է. ապա նա էր որ կազգէր ու կըթելադրէր Սիմէօնին:

Տեսաք ահա, ժողովուրդ Աստուծոյ, որ այս անյայտ ծնած մանուկը չը մնայ անյայտութեան մէջ, ահա ատիճան առ ատիճան կը յայտնուի եւ կը հռչակուի նորա աշխարհ գալը, երկրի վրայ երեւնալը եւ մարդկան հետ շրջելը, որպէս զի մարդիկ պատճառ չունենան չը հաւատալու՝ եթէ չարասիրտ եւ մեղսասէր չեն: Յիսուս իւր անձին մէջ ցոյց տուաւ մեզ զԱստուած, մեզ կըմնայ կարօտով եւ սիրով զինքը գոնել, իրեն հնազանդել եւ իրեն հետ կապուիլ:

Այս փառաւոր յայտնութիւններէն ճանչնալով Քրիստոսի Աստուածութիւնը, Նորա անճառ խոնարհութիւնը, անհամոմատ սէրը եւ անսահման հնազանդութիւնը, սովորինք մինք ալ իւր վստահելի օրինակով խոնարհութիւն եւ հնազանդութիւն: Նա իւր մարմնով զմեզ կընծայէ Հօր Աստուծոյ, եւ որդեգրելով իրեն եղբայր կընէ. մենք ալ սիրենք զինքը ամեն բանէ աւելի, որ արժանի լինինք իւր անճառ սիրոյն. առնենք իւր լոյսը եւ ճշմարտութեամբ քալինք, որ չընկնինք բնաւ մեղաց եւ մոլութեանց խաւարին մէջ, Սիմէօնի հետ ջերմ հաւատքով մինք ալ գոչենք — Տէր, արձակէ զմեզ մեղքի կապերէն, տուր մեզ լոյս որ սրտի եւ մտքի խաղաղութեան մէջ սրբութեամբ պաշտենք զքեզ. եւ արժանի լինինք միշտ փառաւորել զքեզ Հօր եւ Ս. Հոգւոյն հետ. Ամէն:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱՆ ՍԱՄՈՍԷՆ

Սամոս կղզիէն գրուած մի մասնաւոր նամակէ հետեւեալ հատուածը կը քաղենք :—

« Հայ - Եկեղեցի » ամսաթերթը մեծ հաճոյքով կը կարդամ. շատ գոհ մնացի որ այդ թերթը ինձ ծանօթացուցիր, որովհետեւ կրօնական թերթ մըն է, որուն մեր ազգի մէջ ուրիշ չի հրատարակուիր : Բայց փափագելի էի որ ատոր Արժ. Խմբագիրը ժողովուրդը լուսաւորէր կրօնական խնդրոց մէջ, նա մասնաւոր սուրբ Աւետարանի այն խօսքերը, այն առակները որ օրինակի ազգաւ մօտերս մեր Եկեղեցին Մեծի պահոց մէկ կիրակին Տնտեսի կիրակի կ'անուանէ եւ այն օր բոլոր Հայ. Եկեղեցիները տնտեսի Աւետարանը կը կարդացուի : Քրիստոս Տէրն մեր սոյն առակը խօսեցաւ . լաւ՛, բայց ի՞նչ առակ : Քրիստոս իրաւունք եւ արդարութիւն՝ ժողովրդեան կը խօսի անիրաւ տնտեսին ըրածը եւ կը գովէ զանիկայ : Հարկաւ մեր Տէրը նպատակաւ ըսաւ այս առակը . ինչո՞ւ ուրեմն ժողովուրդը գայթակղի անիրաւ տնտեսին ըրածովը, զոր կը գովէ Տէրն մեր : Ըսէ՛ ուրեմն այդ Արժ. Խմբագիրն այս առակը լաւ մը բացատրելու հաճութիւնը ունենայ . որպէս զի ժողովուրդը հասկնայ եւ այլ եւս չգայթակղի : Թերեւս մեր նախնի սրբազան հայրապետք մեկնած եւ բացատրած ըլլան . բայց ժողովուրդը ու՛ր գտնէ այդ գրքերը եւ կարդայ . եթէ կարդայ իսկ չի հասկնար, քանի որ զրաբառ են :

Մնամ եւ այլն .

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ԶԱՔՐԵԱՆ .»



ԱՌԱԿ ԱՆԻՐԱԻ ՏՆՏԵՍՄԻՆ

Նախընթաց գրութեամբ Սամոս կղզիէն եկած հարցումն ամենայն սիրով կը պատասխանեմք: Կրեթէ աւելորդ է աստ կրկնել որ հրատարակութիւնս կրօնի սէրն եւ ուսումն տարածելու եւ արծարծելու միակ նպատակ ունենալով՝ Խըմբագրութիւնս միշտ պատրաստ եւ յօժար է իւր կարողութեան չափ որեւէ կրօնական հարցում պատասխանել. եւ մինչև իսկ կը խնդրէ թերթիս արգոյ ընթերցողներէն որ հաճին այս յօժարակամ ծառայութիւնը ընդունիլ եւ գործ անել ի շինութիւն եւ ի փառս Եկեղեցոյ:

Մեր Եկեղեցին Մեծի Պահոց չորրորդ կիրակէին Տնտեսի աւետարանը կը կարգայ, եւ այդ աւուր երգուած գլխաւոր շարականներ եւս նոյն առակի խորհրդաւոր մեկնութեան կ'ակնարկեն: Բնականաբար Եկեղեցոյ քարոզիչներ եւս պատրաստի եւ յարմարագոյն առարկայ ունին իւրեանց քարոզութեանց համար: Այս պարագայք պատճառ տուած են Մեծի Պահոց չորրորդ կիրակէի Տնեսի Կիրակի կոչուելուն ժողովրդեան կողմանէ, ինչպէս այլ բազում եկեղեցական օրեր եւ եղանակներ ժողովրդական անուններ ստացած են՝ եկեղեցական անուններէն զատ, ինչպէս, օրինակի համար, Բարիկենդան, Կանաչ կիրակի, Կարմիր կիրակի եւլն:

Առակիս համառօտութիւնն այս է: — Մեծատուն ոմն մի տնտես (այսինքն, գլխաւոր ծառայ, կամ տան վերակացու) կունենայ, որ իւր տիրոջ ստացուածն վատնելու պատճառաւ՝ կը կոչուի համար տալ եւ հեռանալ ի պաշտօնէ: Տնտեսն՝ իւր տիրոջ պարտապանները կը կոչէ մի ըստ միով, եւ իւրաքանչիւրի հաշիւէն մէկ մասն կը զեղչէ, եւ այդ կերպով նոցա հետ բարեկամութիւն կը հաստատէ, որպէս զի երբ ինքն բոլորովին ի պաշտօնէ հրաժարի կարենայ ի նոցանէ փոխադարձաբար մարդասիրութիւն եւ հիւրընկալութիւն գտնել: Մեր Աւետարանը կը յաւելու. «Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան զի իմաստութեամբ արար:»

Տարակոյս չկայ որ տնտեսի արարքը սխալ էր. իւր մինչ ցարդ գործած յանցանքներ ի վերայ մի աւելի մեծ եւ վերջին յանցանք կը յաւելու. եթէ մինչ ցարդ իւր տիրոջ ստացուածքն միայն կը վատնէր եւ շլայլութեամբ գործ կածէր, որ աւելի անհոգութիւն եւ պարտուց զանցառու-

թիւն կ'ենթադրէ , այժմ բացարձակապէս անհաւատարիմ կըզտնուի , կըզողանայ , կըխորէ (կեպիւ իմն) որպէս զի վերջը վայելէ : Այս արարքը սխալ եւ դատապարտելի է . այս չէ Փրկչի դովածն եւ յանձնարարածն :

Առակն կամ այլարանութիւնը երբէք չի կրնար իսկականի բոլոր հանգամանքերին ամեն կերպիւ պատշաճիլ եւ յարմարիլ : Ընդ հակառակն որքան զօրաւոր նմանութիւն եւ յարմարութիւն ունենայ իսկականի մէկ մասին հետ , այնքան անյարմար եւ անպատշաճ կըլինի միւս մասերի հետ : Բայց լսողի կամ ընթերցողի պարաքն է բուն առակի միտքն ու զօրութիւնն հասկանալ եւ միայն պատշաճելի մասերը քաղելով՝ առակխօսի նկատեալ խրատն ու դասն ստանալ : Նոյնպէս եւս ներկայ առակի մասնաւոր պարագայք կարեն Քրիստոսի հիմնական քարոզութեանց հակառակ լինել եւ բարոյական օրինաց չհամաձայնիլ : Բայց այսու աւանդեալ բարոյական խրատի զօրութիւնը չի պակսիր . քանի որ տնտեսի խարդախութիւնը չէ , նորա գողութիւնը չէ , զոր Տէրն մեր կըզտովէ , այլ « զի իմաստութեամբ արար » , նորա իմաստուն հոգածութիւնը , որով ամենածանր ճշգնաժամի մէջ՝ մօտալուտ թշուառութենէ ազատուելու համար՝ փախտեան եւ ապահովութեան հնարք կըզտնէ :

Այս առակի բանալին է՝ անմիջապէս յաջորդող խօսքերն , « Զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց : » Այսինքն երբ մարդիկ մարմնաւոր եւ երկրաւոր դժուարութեանց ենթարկուին , շուտով մի ճար կըզտնեն , իւրեանց դժուարութենէն ելնելու ճանապարհ ու հնարք կըփնտռեն ու կըզտնեն , նոյն իսկ անպատուաբեր եւ անարդար միջոցներով : Բայց ոչ այնքան արթուն եւ զգաստ են իւրեանց հոգեւոր եւ հանդերձեալ կենաց ապահովութեան համար : Նոյնպէս մեր առակի տնտեսն իւր մարմնաւոր դժուարութենէն մի ելք գտած էր իմաստութեամբ այլ ոչ արդարութեամբ : Մեր փրկիչն եւս այստեղ արդարութեան դաս չէ որ կուզէ անադել , այլ իմաստութեան դաս կուտայ : Մեր երկրաւոր դժուարութեանց եւ վտանգաց մէջ ապահովութիւն եւ ճար գտնելու համար բարոյապէս աններելի միջոցներ՝ ներելի կըճամարինք կամ զէթ աններելի հանգամանաց վերայ աչք կըզոգենք , այլ եւ այլ առիթներով գործուած մեղաց եւ մինչեւ իսկ ոճրագործութեանց մէջ մեղմացուցիչ պարագայներ կըփնտռենք եւ կըներենք : Կըփաստաբանենք թէ իւր կեանք

փրկելու համար, իւր թշուառութիւն ամոքելու անհնարին ճգամք այն ինչ յանցաւոր գործեց իւր յանցանք:

Արդ մեր Փրկիչն այս ազգու եւ զօրաւոր օրինակաւ կուզէ տպաւորել մեր մտաց վերայ թէ ինչպէս երկրաւոր իրաց մէջ աշխարհամոլ մարդիկ («որդիք աշխարհիս այսորիկ») իւրեանց մարմնաւոր եւ առժամանակեայ ապահովութեան համար հնարիմաց եւ իմաստուն են. ուրեմն որքան առաւել պարտիմք հոգեւոր իրաց մէջ («որդիք լուսոյ») մեր յաւիտենական կենաց ապահովութեան համար փրկութեան հնարք գտնեմք, քանի որ մենք եւս տնտեսի պէս ամբաստանութեան ներքոյ կը գտնուիմք մեր ծիրով ստացուածներն, այսինքն, Աստուծոյ պարգեւեալ շնորհներն ու բարեքներն, վառնած ու չարաչար գործածած լինելու համար, եւ քանի որ մեր արտաքսումն ի տնտեսութենէ, այսինքն, յայտն աշխարհէս, այլ եւս վճռուած է, եւ մեր հանգէպ կայ այժմ այլ եւս յաւիտենական թշուառութիւն եւ կարօտութիւն:

Յայտնի բան է որ մենք մեզէն օրեւէ հոգեւոր մթերք չունիմք որով կարելի լինի հանդերձեալ կենաց մէջ մեր պէտքերը գոհացնել, դարձեալ պէտք է Աստուծոյ շնորհաց կարօտիմք: Բայց այդ շնորհքն կորուսած ենք եւ աստուածային արգարութիւնը զմեզ յաւիտենապէս զատապարտած է. ուրեմն արգարութեամբ աստուածային շնորհքն ստանալու իրաւունք չունիմք, ուրեմն կը մնայ մեզ ուրիշ հնարք գործ ածել մեր յաւիտենական կեանքն ապահովելու համար:

Քալով Եկեղեցւոյ Սուրբ Հարց եւ մասնաւորապէս մերս Սուրբ Եկեղեցւոյ հարց գրուածոց այս մասին, մեր Սամոսցի արգոյ թղթակից կրնայ ապահով լինել որ նոքա ըստ մեծի մասին վերոյիշեալ մտքով եւ ուղղութեամբ կը մեկնեն սոյն առակ: Բնականաբար այս մեկնութեանց առաջին տեղը կը գրաւէ Մեծի Պահոց չորրորդ կիւրակէի Օրհնութեան շարականն զոր ոմանք Ս. Մեսրոպայ իսկ այլք Ս. Ներսէս Ծնորհաւուոյն կը վերագրեն: Տարակոյս չկայ որ երբ Քրիստոս այս առակ խօսեցաւ՝ զխաւորաբար վերոյիշեալ բարոյական խրատն էր զոր կուզէր լուսաբանել. եւ մեր շարականն որպէս Ս. Ներսէս Ծնորհաւի իւր Յիսուս Որդի քերթուածին մէջ՝ զխաւորաբար այս բարոյական նշանակութեամբ կը մեկնեն: Այսու ամենայնիւ եկեցական բանաստեղծ երգասանն ազատ է այս գլխաւոր բարոյական մեկնութենէն դուրս՝ ուրիշ խորհրդաւոր եւ նկարագրական բացատրութիւններով զարդարել իւր առարկայն: Սոյնպէս վերոյիշեալ շարական ի

մասին անիրաւ տնտեսին չորս տարբեր մեկնութիւններ կը տայ, որոց ամենն եւս կրնան իւրեանց սահմանի մէջ ստոյգ լինել եւ Գրիստոսի մտաց մէջ եւս երկրորդական տեղ ունեցած լինել առանց որեւէ կերպիւ առակիս հիմնական բարոյական մեկնութեան զօրութիւնը նուազացնելու: Այնքան հազուագիւտ է շարական մատենը աշխահականաց տուներու մէջ, որ աւելորդ չենք համարեր յիշեալ Օրհնութեան շարականէն այս առակին վերաբերեալ տուներն այստեղ արտատպել:—

Որ արարեր զօրութեամբ զիմանալեաց աշխարհ վերին. և ի նմա հաստատեցեր տընտես ըզպետըս հրեղինաց. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ:

Որ տիրապէս մեծատունդ ստեղծեր երկրորդ աշխարհ զգալի. և ի դարստն որ յԱզգենի տընտես եղեալ զմարդն առաջին. օրհնեմք:

Որ շինեցեր բարձրագոյն զեկեղեցի քո խորհրդեամբ. և ի սմա կարգեալ տընտես զքարոզս Բանին ճշմարտութեան. օրհնեմք:

Անտանելոյն տաղուար բարձող էիցըս բարձրին. որ ծընար զԱստուած մարմնով անմարմնաբար ծրհունդըն չօր. բարեխօսեա վստըն մեր Աստուածածին Մարիամ:

Որ տիրականս առ ի քէն կարգեալ տընտես բնութեան մերոյ. իմաստութեամբ ըզպարտիս եթող քոյոց պարտապանաց. թող և ըզմեր ըզյանցանս ողորմութեամբըդ քո Գրիստոս:

Որ զպատմուճանն առաջին զոր զբեցուցեր օծմամբ Հոգւոյն. մերկացաք մեղօք ըստ նախաձօրըն պարտանաց. զբեցո ըզնոյն վերջստին որորմութեամբըդ քո Գրիստոս:

Յաստուածային կայծակունսն ի սրովբէիցն անհրպելին. անմաքրապէս մերձեցաք գող պարտապան քում խորհրդոյն. շնորհեա ըզնոյն մաքրութեամբ ի թողութիւն մեղաց մերոց:

Առաջին տան մէջ առակի մեծատան պալատը կը համարի երկինքն որոյ մէջ ամիոփուած էին իսկզբան ամենայն երկնային եւ հողերու թիւնք, հրեշտակք եւ հրեշտակապետք, սերովբէք եւ քերովբէք եւ այլն. եւ այդ աստուածային գերզաստանի վերայ տնտես կարգուած էր Սաղայէլ, որ իւր շարութեամբ ի պաշտօնէ արձակուեցաւ, ի յերկնից արտաքսուեցաւ, ինչպէս առակիս տնտեսն իւր շոյալութեանց համար ի պաշտօնէ մուրժուեցաւ: Այս տան մէջ որեւէ ակնարկութիւն չկայ առակին բուն խրատական մասին, այլ սոսկ մէկ պարագայն կը նշուի իւր հրեշտակներէ Սատանային: Երկրորդ տան մէջ դարձեալ մեծատունն է Աստուած, պալատն է Աղիւտիկան զրախտն որոյ վերայ տնտես դրած է «զմարդն առաջին», այսինքն, զԱզամ, որ իւր

պատուիրանագանցութեան ազագաւ իւր պաշտօնէն եւ Ադի-
նական փառքէն մերժուեցաւ : Եւ ոչ այս տան մէջ խրա-
տական մասին ակնարկութիւն կը գտնեմք :

Երրորդ տան մէջ նմանութիւնը դեռ աւելի սահմանա-
փակ է : Եկեղեցին է մեծատան աշարանքն , եւ Եկեղեցւոյ
պաշտօնեայք՝ տնտեսներն են Բանին կենաց . սակայն յոռի
մատակարարութեան եւ արտաքսման խնդիր չկայ աստ .
բայց եթէ զօրութեամբ հասկանալու է որ անհաւատա-
րիմ պաշտօնեայք Եկեղեցւոյ մեր առակի տնեսի տպա-
տիժը պիտի կրեն :

Չորրորդ տան մէջ որեւէ ակնարկութիւն չկայ սոյն
առակին : Իսկ հինգերորդին իմաստն է . Տիրական կամ
իշխանական զօրութիւնը որ մեր բնութեան մէջ կայ ,
այսինքն , մարդկային միւսք կամ կամք , կամ աւելի լաւ , հոգին ,
տնտես կարգուած է իւրաքանչիւրիս բնութեան վերայ ,
որ սահմանեալ է «տաճար Հոգւոյն Սրբոյ» լինելու , եւ
հետեւաբար Աստուծոյ բանաւոր տուն եւ կալուած համա-
րելու է ամեն քրիստոնեայ : Հոգին պարտական է իւր
պատկանելի մարմնոյն զգայարանքներն Աստուծոյ կամաց
համեմատ ուղղել . բայց չկարենալով իւր տնտեսական
պաշտօն հմտութեամբ կատարել եւ մեծատան ստացուած-
ներն (Աստուծոյ շնորհներն) վաճանելով եւ չարաչար գոր-
ծածելով՝ համարատուութեան կոչուեցաւ , քանզի պէտք
էր այլ եւս հրաժարէր տնտեսութեան պաշտօնէն (այսինքն ,
պիտի մեռնէր) : Այս պարագային տնտես հոգին տեսնելով
որ այլ եւս այս կեանքէ հրաժարելով՝ ապագային անստուգու-
թեան եւ թշուառութեան պիտի մատնուի (հանդերձեալ
կենաց մէջ) , անիրաւ տնտեսի պէս « իմաստութեամբ զպատիս
եթող քոյոց պարտապանաց » , այսինքն , շտապմամբ սկսաւ
քրիստոնէական առաքինութիւններ գործել , մասնաւորա-
պէս ներեց իւր յանցաւոր եղբայրներին որք իւր զէմ յան-
ցանք գործած լինելով՝ միանգամայն Աստուծոյ զէմ մեղան-
չած էին . եւ հետեւաբար Աստուծոյ պարտապաններ էին :
Այս իմաստութեամբ , այսինքն , այլոց ներողամիտ լինելով՝
կարողացաւ ինքն եւս ողորմութիւն գտնել՝ իւր պաշտօնէն
(այս կեանէն) հրաժարելէն յետոյ , ինչպէս տէրունական
աղօթից մէջ մեր մեղաց թողութեան գլխաւոր պայմանն է
որ մեք եւս այլոց մեղքեր ներենք . « Եւ թող մեզ զպարտիս
մեր որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց : »

Շարականի մըւս տանց մէջ եւս ակնարկութիւններ կան զորս

բարեկազատ ընթերցողին կըթողում քննել եւ տեղեկանալ : Յօդուածս կըվերջանում Ս. Ներսէս Շնորհալուոյն վերոյիշեալ Յիսուս Որդի քերթուածէն յառաջ բերելով մէկ հատուածն որ այս առակին կըպատկանի : —

Ի ծառայի գոլով մասին որպէս ստեղծեր կարգել զմարմին , եւ տիրական իշխան զՏոգին ըստ նախատիպըդ պատկերին . Բայց անիրաւս ի յերկոսին , ի յիմ անձին եւ յօտարին , Նըմանեցայ անիրաւին , իմ վատութեանս օրինակին :

Որ՝ ամբաստան զինէն լինին վտան չարեացս որ միշտ գործին , Սուրբ պահպանն իմ անմարմին . եւ մարմնաւորք որ տագնապին . . . Այլ դու , առատ յամենայնի , տուր ըզզըզջումն անզեղջս անձին . Դառնալ առ քեզ բոլորովին , նախ քան կոշման զիս յատենին Պարտապանաց դատաստանին մասն ինչ թողուլ գոնէ պարտին . . . Շնորհեա ե ինձ ըստ տընտեսին լինել արժան քում գովեստին . . . Թէ ե որդի եմ աշխարհին , տուր ինձ զիմաստ մեղաց դարձին :


ԱՌԱՎ ԱՆԻՐԱԻ ԴԱՏԱԻՈՐԻՆ

Ինչպէս նախընթաց բացատրութենէն տեսնուեցաւ , Քրիստոս իւր քարոզութեանց միջոցին իւր խօսքին կամ ասանդելի վարդապետութեան զօրութիւն եւ ազդուութիւն տալու համար յաճախ չափազանց լեզու գործ կածէր : Թէպէտ ոչ այնքան չափազանց որքան ճնտեսի առակն , Անիրաւ դատաւորի առակն նոյն օրէնքով մեկնելու եւ հասկանալու է : Աստուած արդար է եւ բարեգութ , եւ ոչ թէ միայն «գիտէ զպէտս մեր եւ զկարիս առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք» , այլ կուզէ օգնել եւ ողորմիլ շատ աւելի քան զոր մեր միտքէն կանցնի : Բայց եւ այնպէս մի անիրաւ դատաւորի կընմանցնէ որ ոչ ի մարդկանէ ամաչէ եւ ոչ յԱստուծոյ երկնչի :

Այս առակ կերպիւ իմն նախընթաց առակի լրումն եւ կատարումն է . այսինքն , քանի որ անիրաւ տնտեսի նման պարտիմք յառաջագոյն բարեկամներ շահիլ , երկնից արքայութիւն ժառանգելու համար պատրաստութիւն տեսնել , ուրեմն ամենէն զօրաւոր միջոցն այս նպատակին հասանելու համար՝ աղօթքն է : Ամբողջ Սուրբ Գրոց մէջ չկայ մի ուրիշ հատուած որ այս առակի չափ զմեզ քաջալերէ եւ խրախուսէ՝

անձանձիր աղօթել: «Պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս եւ մի ձանձրանալ:» Այսինքն, ստել կուզէ, եթէ դուք ստէպ եւ առանց ձանձրանալոյ եւ կատարեալ հաւատով աղօթէք, վստահ եղէք որ Աստուած ձեզ կըլսէ, քանզի նա ոչ թէ անիրաւ դատաւոր է, այլ բարեգութ եւ ողորմած Հայր է: Քանզի եթէ մահկանացու մարդիկ իւրեանց համագոյից ստէպ թախանձանօքն ի գութ կըշարժին եւ նոցա խնդիրը կըկատարեն, ո՞չ ապաքէն Աստուած որ գերազանցապէս ինքնին գթութիւն է՝ իւր ստեղծուածոց պաղատանքը լսելու պատրաստ է:

Այսպիսի պարագայից ներքոյ ոչ թէ միայն հասարակ մարդիկ իւրեանց ընկերների խնդիրը կըկատարեն, այլ մինչեւ իսկ անիրաւ եւ հպարտ դատաւորն որ ոչ յԱստուծոյ երկնչէ եւ ոչ ի մարդկանէ ամաչէ», նոյնպիսի ողորմածութեան ենթակայ է, բուռական է որ խնդրողն յարատեւէ իւր խնդրուածոց մէջ: Դարձեալ եթէ անիրաւ մարդիկ այսքան գթութիւն ունին, ո՞չ ապաքէն Աստուած իւր ծառայից աղօթքը կըլսէ եւ արժանապէս կըկատարէ նոցա հայցուածքն:



Ա Ձ Դ

Առ Լօնդրայի Պատուական Ազգային

Յառաջիկայ Ապրիլ 21 ին , որ է Նոր Կիրակի եւ Կրկնազատիկ , հանդերձեալ եմ Ս. Պատարագ մատուցանել ի հոգեւոր միութարութիւն մայրաքաղաքիդ բարեպաշտ Ազգայնոց , ի ORPHANAGE CHAPEL, Randolph Gardens, Kilburn, LONDON, առաւօտեան 10 30 ժամուն :

Ձեր բարեպաշտութենէ պիտի խնդրեմ որ փութայք վերոյիշեալ ժամուն եկեցեցին զանուիլ , որպէս զի կարելի լինի Ս. Պատարագըն ժամանակին սկսել եւ ժամանակին աւարտել ի դիւրութիւն այն բարեսէր մայրապետաց , որք 12 30ին իւրեանց առանձին պաշտամանց մատուօր համար պէտք ունին :

Այս առթիւ կըհամարձակիմ յիշեցնել Ձեր նուիրական պարտականութիւն ի մասին Սոստովանութեան եւ Հալորդութեան : Եթէ խոստովանուիլ ցանկացողք բարեհաճին անմիջապէս երկտողիւ ինձ իմացնել իւրեանց զիտո՞ւմ եւ ժամադիր լինին , ամենայն սիրով մէկ երկու օր յառաջ անոնց կ'այցելեմ :

Մաղթելով վասն Ձեր եւ համայն ընտանեաց Ձերոց Գրիստոսի Սուրբ Յարութեան առաջիկայ Տօնի բազմաառատ շնորհք եւ օրհնութիւն ,

Մանչեսթր 27 Մարտ 1901

Միամ , Աղօթարար ,

Բ. Բ. Է.

